№ 57 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 13

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՄԱՐՏԻ 13 № 57

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բագի, Կարօ և Յովհաննէս Յակոբեանցները խորին վշտով յայտնում են բարեկամներին և ծանօթներին առաջինի որդու, երկրորդի ամուսնու, իսկ երրորդի անմոռանալի եղբօր՝

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՅԱԿՈԲԵԱՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 12-ին առաւօտեան, երկարատև հիւանդութիւնից յետոյ: Ամբիծը ուրբաթ, երեկոյեան ժամը 6½-ին, իսկ թաղումը շաբաթ, 15 մարտի: Յուղարկաւորութիւնը առաւօտեան ժամը 10-ին, իրանց բնակարանից (Ելիզավէտինսկայա փող. № 17) դէպի Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցին, Վորոնցովի արձանի մօտ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը:

→ ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՈՆ ←
Հինգշաբթի, մարտի 13-ին
Հաւլաբարի նորակազմ հայ դրամատիկական խումբը
կը ներկայացնէ
ԱՊԱՀԱՐԶԱՆԻ
ՍԻՒՐՊՐԻԶՆԵՐ
Կոմ. 3 արար. հեղ. Բիսսոնի և Ա. Մարսի
Թարգմ. Արմէնեանի և Տիրացեանի
Մասնակցում են տ. տ. Զաբէլ, Աստղիկ, օր. օր. Ադամեան, Ծուրինեան և այլք. պ. պ. Արմէնեան, Իփեկեան, Վ. Միրզոյեան, Տէր-Առաքելեան, Ղազարեան, Լաքա և այլք:
Տեղերի գները 1 ր. 50 կ. մինչև 20 կ.:
Տոմսակները կարելի է ստանալ Թատրոնի կասսայում:
Սկիզբն է 8 ժ. երեկոյեան:
Վարչութիւն՝ Ադամեան
Ռէժիսեօր՝ Արմէնեան
(առ.) 1—1

ԳՈՐԾՕՆՆԵՐ

Մեր երկրում դեռ շատ քիչ կան ընկերակցական ձեռնարկութիւններ: Նրանք նոր-նոր են մտնում մեր կեանքի մէջ:

Խոշոր ընկերակցութիւններ կազմվեցին Բագուի նաւթային շրջանում և ունեցան աջողութիւն: Եւ կարելի է ասել, որ ներկայումս այնտեղ եղած խոշոր ձեռնարկութիւնների մեծագոյն մասը հաստատված է ընկերակցական հիմքերի վրա:

Նոյնատեսակ ընկերակցութիւններ կան և հաստատվում են նաև արդիւնագործական մի քանի ուրիշ խոշոր ձեռնարկութիւնների մէջ:

Մենք ունենք ընկերակցութիւններ նաև փոքր տնտեսութիւնների շրջանում աւելի ռամկավարական հիմքերի վրա, օրինակ փոխատու-խնայողական, սպառողական, արդիւնագործական կազմակերպութիւններ: Եւ թէև դրանք դեռ շատ քիչ են թւով և չեն ստացել այն ամրութիւնը, որը կարևոր է, որպէսզի նրանք դառնան կեանքի ուժեղ գործօններ, այնուամենայնիւ նրանք դարձել են իրական կեանքի սեփականութիւն և իբրև առաջին քայլեր՝ շաւիղներ են բաց անում իրանց ապագայ բարգաւաճ զարգացման համար:

Այդ ընկերակցութիւններին վերապահված է մեծ դեր ժողովրդական տնտեսութեան մէջ: Նրանց վիճակված է բեղմնաւորելու ժողովրդի մարդու աշխատանքը և ազատելու նրան այն կեղեքումներից, որոնց նա ենթակայ է իր անկազմակերպ լինելու պատճառով:

Եթէ խոշոր կապիտալի ներկայացուցիչները բաժնետիրական համախմբումների միջոցով աւելի ևս բարձրացնում են կապիտալի ույժը, բնական է, որ մանր արդիւնագործողները և սպառողները նոյնպէս կարողանան որոշ ույժ ձեռք բերել իրանց համախմբված գործունէութեամբ:

Եւ այն փորձերը, որոնք սկսվել են մեր երկրում, իսկ հսկայական ծաւալով տեղի ունեն քաղաքակիրթ երկրներում, ցոյց են տալիս, որ այդ հաւաքական գործունէութիւնը իսկական դեր ունի կատարելու ժողովրդական տնտեսութեան զարգացման գործի մէջ և պէտք է հող պատրաստէ աւելի բարձր կուլտուրական տնտեսական կարգերի համար:

Սակայն սկզբից և եթ պէտք է չը մոռանալ մի կարևոր հանգամանք: Դա կազմակերպչական գործի չափազանց լուրջ բնաւորութիւնն է, որը և պէտք է առանձին ուշադրութեան և հոգածութեան առարկայ լինի:

Եթէ գործի կազմակերպութիւնը և նրա ղեկավարութիւնը մատնվեցին անփութութեան և քմահաճոյքների, այն ժամանակ այդ խոշոր և ուժեղ գործօնը կը դառնայ ոչնչութիւն և իր անառողջ գործադրութեան շնորհիւ կը վարկաբեկվի երկար տարիներով:

Արդիւնագործական, սպառողական և վարկային ընկերակցութիւնների թիւը մեծացնելու և նրանց դերը ամրացնելու համար անհրաժեշտ է, որ նախնական փորձերը լինեն կատարեալ, համոզիչ, ազատ թիւրիմացութիւններից և զանցառութիւններից:

Այն ժամանակ առաջին փորձերին կը հետևեն յաջորդները և կը մարմնանայ իրական կեանքի մէջ տնտեսական կեանքի առաջադիմութեան նպաստող մի խոշոր խթան, որը ժողովրդական ցրված ույժերը կը կենտրոնացնէ ուժեղ կազմակերպութիւնների մէջ, մանր խնայողութիւնները և փոքրիկ եկամուտները կը դարձնէ ուժեղ դրամագլուխներ և կը տայ ժողովրդին հնարաւորութիւն զգալու և դառնալու տէր երկրի տնտեսական կեանքում:

Լուրջ հետևանքների հասնելու համար անհրաժեշտ է լուրջ գործունէութիւն:

Տնտեսական կեանքի գործնական պայմանները պահանջում են ուշադիր վերաբերմունք դէպի այն բոլորը, ինչ որ ազդում է տնտեսական կեանքի վրա:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 12 մարտի

Բալախանում պայթումը առաջացաւ ոչ թէ գազից, այլ տան մէջ պահվող պայթուցիկ նիւթերից: («К.»)

—

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացված, որ մարտի 11-ի գիշերը անյայտ մարդիկ տարել են Շուշու հոգևոր կօնսիստորիայի գանձարկղը փողերով և թղթերով: Մանրամասնութիւնները մենք կը հաղորդենք վաղը: Ասում են, որ կողոպտման մասնակցել են կօնսիստորիայի ծառաները, որոնք ներկայումս կալանաւորված են:

—

Պետերբուրգ, 12 մարտի

Սենատը անհետևանք թողեց 1-ին Պետական Դումայի դատապարտված անդամների վճռաջինջ բողոքագիրը:

Նորին Մեծութեանը բաղդ ունեցաւ ներկայանալու Կովկասի Փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ-լէյտենանտ Շատիլովը: («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 12 մարտի

Կոմս Լ. Ն. Տօլստօյը բոլորովին առողջացել է:

—

Զինուորական մինիստրի պաշտօնի համար իբրև թեկնածուների յիշում են Գերշէլմանի, Իվանովի և իշխան Դոլիցինի անունները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—

Մի համեմատութեան առիթով (վրացիներ, հայեր եւ կաթողիկոսական խնդիր)

Մեր ժամանակը կեանքին ուղղութիւն տուող հիմնական սկզբունքների և գործօնների կամ՝ ինչպէս ընդունված է ասել՝ արժէքների վերագնահատման (переоцѣнка цѣнностей) անցողական մի շրջանն է բոլորում: Այդ արժէքներից կաթողիկոսական թափուր գահը վերագնահատման տեսակէտից դարձել է այժմ հերթական: Հասարակական շրջաններում յայտնըվում են այլ և այլ կարծիքներ, և կաթողիկոսութեան հակառակորդները, իբրև զօրեղ փաստ, օրինակ են բերում վրացի ազգը, որ չունի կաթողիկոսութիւն և, որպէս հետևանք այդ հայեցակէտի՝ այսինքն կաթողիկոսութեան անկարևորութեան, առաջարկում են կատարել անտարբեր վերաբերմունք ունենալ կաթողիկոսական առաջիկայ ընտրութիւններին: Վերոյիշեալ հայեցակէտը արձագանք գտաւ նաև մամուլի մէջ: «Մշակի» № 161-ում (անցեալ տարւայ) տպված պ. Հ. Առաքելեանի «Ջուր պղտորողներ» վերնագրով յօդուածում մէջ է բերված «Երկրի Ձայնը» շաբաթաթերթից պ. Տ. Զաւէնի յօդուածից մի քաղուածք կաթողիկոսութեան մասին, որտեղ կտրուկ ու վճռական կերպով ասված է. «Թէև վրացիները փառաւորապէս ապացուցած լինեն, որ կարելի է, այո, իբրև մի ուրոյն ժողովուրդ, ազգ ապրել և գոյութիւն ունենալ առանց այդ չքեղութիւնների»:

Մի՞թէ կարելի է երկու դրացի ազգերի մասին մի թռուցիկ համեմատութիւն անելուց յետոյ հեշտութեամբ եզրակացնել, որ կաթողիկոսութիւնը «չքեղութիւն» է և պէտք է դէն շպրտել այդ, քանի որ վրացիները ապրում են առանց այդ «չքեղութեան»... Որ վրացիները ապրում են առանց այդ «չքեղութեան»,—դա անվիճելի է: Որ վրացիները անցեալում ապրել են ամբողջ դարեր այդ «չքեղութեամբ», այսինքն ունեցել են կաթողիկոսութիւն և միայն ռուսաց տիրապետութիւնն ընդունելուց յետոյ զրկվել են այդ «չքեղութիւնից» և այն էլ ոչ յօժարակամ,—նոյնպէս անվիճելի է:

Ուրեմն նախքան երկու դրացի՝ վրացի և հայ ազգերի միջև համեմատութիւն անելը և մէկին միւսի համար, իբրև օրինակ, մէջ բերելը, պէտք է ի նկատի առած այդ ազգերի աշխարհագրական, պատմական և քաղաքական հանգամանքները, նրանց անցեալն ու ներկան և ապա ժխտել մի բազմադարեան պատմական հաստատութեան կարևորութիւնը և համարել այն «չքեղութիւն»: Թէպէտև օրաթերթի սուղ էջերը թոյլ չեն տալիս պատմական մանրամասն փաստերով պատկերացնել կաթողիկոսութեան կատարած խոշոր պատմական դերը մեր ժողովրդի անցեալում և ներկայում, սակայն մի համառօտակի ակնարկից անգամ կարելի է պարզել՝ թէ ո՛րքան ճակատագրական վիհ կայ երկու դրացի ազգերի գոյութեան պատմական պայմանների միջև, որ ամենևին չէ կարելի վերցնել մի ազգի պատմական ներկայ մոմենտը և, հիմնվելով դրա վրա, ժխտել մի ուրիշ ազգի պատմական գոյութեան շահերի հետ սերտ կերպով կապված բազմադարեան պատմական, իր տեսակում եզակի, հաստատութեան արժէքը: Վրաստանը իր քաղաքական անկախութիւնը պահպանել է աւելի երկար ժամանակ, քան Հայաստանը, և միայն անցեալ դարի սկզբներին իր քաղաքական անկախ կացութիւնն ու բաղդը վրացի ազգը յանձնեց յօժարակամ ռուսական արծւին, ընդունելով ռուսաց պետութեան հովանաւորութիւնը և կազմելով այդ պետութեան մի մասը իր ամբողջ երկրով:

Հայաստանը իր քաղաքական անկախութիւնը կորցրել է Վրաստանից շատ դարեր առաջ և այն էլ ոչ յօժարակամ, այլ հակառակ իր կամքի. հայ ազգը ցրվել է եւ իր երկրում պատառ-պատառ եղել ասիական բռնակալ «գազաններից»... Թէ ինչե՛ր է քաշել և ի՛նչ օրեր է տեսել հայ ժողովուրդը պատմական այդ ժամանակամիջոցում, այդ յայտնի է ամեն մէկին, ով պատմութեան հետ շատ թէ քիչ ծանօթութիւն ունի. որ այդ ժամանակամիջոցում կաթողիկոսութիւնը կատարել է պատմական մեծ դեր, պահպանելով հայութեան վերջին բեկորները,—նոյնպէս յայտնի է պատմութիւնից:

Ո՞վ էր ասիական բռնակալ «գազանների» առաջ նահատակվող ժողովրդի ցաւերից խօսողն ու միջնորդողը, ո՞վ էր կարողանում դէթ մի փոքր ազդել այդ «գազանների» խղճի ու սրտի վրա, որ մեղմացվէին նրանց ֆանատիկոսութեան ու բարբարոսութեանց չափն ու սահմանը: Այդ անում էր կաթողիկոսութիւնը, կամ աւելի ճիշտն ասած՝ ասիական բարբարոս բռնակալները լինելով տիպիքական ներկայացուցիչներ աստուածպետական-թէօկրատ վարդապետութեան, խոնարհվում էին բազմադարեան կրօնական հաստատութեան առաջ և, իբրև թէօկրատ դատողներ, ընդունում էին այդ հաստատութեան կրօնա-պետական նշանակութիւնը և շնորհում հայ ժողովրդին կաթողիկոսութեան միջոցով ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական որոշ իրաւունքներ:

Ներկայումս էլ Թիւրքիայում ու Պարսկաստանում հայ ժողովրդի պատմական ներկան նոյն շաւղով է ընթանում. տեղական հոգևոր հաստատութիւնները, իրանց հոգևոր պետերով կազմում են այն օղակը, որով հայ ժողովուրդը շաղկապվում է պետական-քաղաքական կեանքի հետ պաշտպանելու համար իր գոյութեան տարրական իրաւունքները:

Մինչդեռ վրացի ազգը մինչև անցեալ դարի սկիզբները ապրել է քաղաքական անկախ կեանքով և ապա, ընդունելով յօժարակամ ռուսաց պետութեան հովանաւորութիւնը, շարունակարար վարել է և վարում է խաղաղ ու անդորր կեանք, վայելել է և վայելում է գոնէ կեանքի, գոյքի և ազգային արժանապատուութեան ապահովութիւնը,—շատ դարեր առաջ իր երկրով պատառ-պատառ դառած հայ ազգը վերջին հարիւր տարւայ ընթացքում աւերվել ու նահատակվել է տեղի ունեցած մի շարք ռուս-պարսկական և ռուս-թիւրքական պատերազմներից, տեղական խաների ու քիւրդական ցեղերի շահատակութիւններից ու խժդժութիւններից... Բոլոր հայաբնակ գաւառները՝ Երևան, Գանձակ, Շուշի, Կարս, Ատրպատական, Էրզրում, Բայազէտ, Ալաշկերտ և այլն, իբրև բեմ, ծառայել են մի շարք արիւնռուշտ ճակատամարտերի, ամեն տեսակ աւերածութեան և սարսափների... Իսկ այդ ամենի հետևանքն էր մասսայական գաղթն ու պանդխտելը բուն Հայաստանից. փախչում էին ամեն ինչ թողած՝ փրկելու իրանց կեանքը սրից ու կրակից... փախուստ, որ մինչև օրս էլ շարունակվում է...

Իսկ ո՞վ էր հոգում գաղթող ժողովրդի մասին, ո՞վ էր բռնակալ պետերի, իշխանների և այլ և այլ մեծամեծների առաջ միջնորդում, աղերսում՝ ապաստան տալ հայ գաղթականներին և սովեալներին. ո՞ւմ վրա էր հայ ժողովրդի յոյսը՝ թէ իր մասին մտածող, հոգացող կայ... Այդ անում էր կաթողիկոսութիւնը. ապացոյց՝ անցեալ դարում տեղի ունեցած մասսայական գաղթն ու փախուստը Էրզրումի, Բայազէտի և Ալաշկերտի գաւառներից...

Եթէ հայ ազգը ունեցել է հանգստութեան տարիներ ու կամեցել է նուիրվել իր մտաւոր և կուլտուրական զարգացման, այդ տեւել է շատ կարճ ժամանակ՝ մի կամ երկու տասնեակ տարիներ, իսկ վերջը այնպիսի աղէտներ ու հարուածներ են առատօրէն թափվել հայերի վրա, որ հայ ժողովուրդը անճարացած՝ ստիպված է եղել զբաղվել միմիայն իր կեանքը փրկելու խնդրով: Ի՞նչ է ներկայացնում անցեալ դարի վերջին երեք տասնեակների հայ ազգի մտաւոր վերածնութեան՝ դպրոցների, ազգօգուտ ու այլ բարեգործական հաստատութիւնների և ընկերութիւնների, եկեղեցական և դպրոցական կալուածների, գրականութեան և լրագրութեան պատմութիւնը Թիւրքիայում և Կովկասում:—Մի մարտիրոսութեան պատմութիւն... Եւ այդ մարտիրոսութեան կարճատև պատմութիւնն էլ պսակվեց Թիւրքիայում հայերի մասսայական կոտորածով, իսկ Կովկասում հայ-թուրքական ջարդերով...

Լրագրական էջերը թոյլ չեն տալիս մէկ առ մէկ յիշատակել Թիւրքիայում Պոլսի պատրիարքութեան և Կովկասում կաթողիկոսութեան կատարած ազգօգուտ խոշոր գործերը հայ ազգի վերածնութեան դարեշրջանում: Հէնց այն [illegible], որ հայ ազգը Պոլսի պատրիարքութեան շնորհիւ հնար ունեցաւ իր գոյութեան խնդիրը դնել միջազգային հրապարակի վրա Բեռլինում՝ եւրոպական դիպլոմատիայի առաջ: Ո՞ւմ չէ յայտնի, որ մեր մտաւոր վերածնութեան ամենաանհրաժեշտ խմբակը՝ երկու անգամ նահատակված դպրոցները իրանց գոյութեամբ սերտ կերպով կապված են կաթողիկոսութեան հետ: Ներկայումս՝ Հաագայի խաղաղարար համաժողովին դիմումը կատարվեց կաթողիկոսութեան անունից. Թիւրքահայ սովեալների օգտին հանգանակութիւն բանալու իրաւունքը ստացվեց կաթողիկոսութեան միջոցով:

Թէ ո՛րքան անհրաժեշտութիւն է ներկայացնում կաթողիկոսական պատկառելի հաստատութիւնը հէնց ներկայ ժամանակ, հոկտեմբերեան մանիֆէստից յետոյ, ոչ թէ միայն մեզպէս դժբաղդ ու նահատակ ազգի համար, այլ նոյնիսկ մեզանից անհամեմատ աւելի պատմական բարեյաջող պայմաններում ապրող վրացի ազգի համար, այդ երևաց այն բանից, որ 1905 թ. վերջերը՝ «ազատութեան մեղրամիսներին» վրացիների կողմից մի բազմանդամ պատգամաւորութիւն ներկայացաւ Փոխարքային և յայտնեց վրացի ազգի ջերմ իղձը՝ վերահաստատված տեսնել վրաց կաթողիկոսութիւնը, սակայն որը մերժվեց իշխանութեան կողմից:

Հայկական կեանքը դեռ չէ ստեղծել պատմական այն նոր գործօնները, որոնք փոխարինելու են հնադարեան կաթողիկոսութիւնը. տակաւին հայ ազգի գոյութեան դատը իրականութիւնը պահանջում է կաթողիկոսութեան յարատևութիւնը, որի հեղինակութիւնը վերջերս սկսել է ուժեղանալ և ստանալ մինչև իսկ միջազգային բնոյթ: Ռուս-ճապօնական պատերազմը հերթից դուրս ձգեց Հեռաւոր Արևելքի խնդիրը և այժմ եւրոպական դիպլոմատիայի առաջ հերթական դարձաւ Մերձաւոր Արևելքի խնդիրը. կնքվեցին մի շարք դաշինքներ հզօր պետութիւնների միջև. անհաշտելի համարված երկու հզօր պետութիւններ՝ Ռուսաստանը և Անգլիան այժմ ձեռք-ձեռքի տուած՝ համերաշխ կերպով նպաստելու են Մերձաւոր Արևելքի հարցի լուծման. անխուսափելի են համարվում Թիւրք ժողովրդի յուզումներն ու շարժումները և եւրոպական միջամտութիւնը Թիւրքիայի գահաժառանգութեան խնդրում «կարմիր» սուլթանի մահից յետոյ, որը սպասվում է անհամբեր... պարսկական մի ամբողջ գաւառ գրաւել են Թիւրքիայի զօրքերը. Պարսկաստանը յեղափոխական եռման մէջ է... Այս ամենը ցոյց է տալիս, թէ ո՛րքան մութ ամպեր են կուտակվել Մերձաւոր Արևելքի քաղաքական հորիզոնի վրա, որ մօտալուտ ապագայում տեղի են ունենալու խոշոր պատմական դէպքեր, որոնք վճռելու են շատ ազգերի, ինչպէս և հայերի, բաղդը... Մի՞թէ այդ ժամանակ կաթողիկոսութիւնը չը պէտք է հանդիսանայ հայ ժողովրդի գոյութեան շահերի պաշտպանն ու թարգմանը աշխարհիս հզօրների առաջ: Մի՞թէ կաթողիկոսութիւնը չը պէտք է աշխատի առաջն առնելու կամ գոնէ մեղմացնելու այն արհաւիրքներն ու աղէտները, որոնք անխուսափելիօրէն բռնկվելու են Մերձաւոր Արևելքի խնդրի լուծման ժամանակ այն երկրում, որը հայ ժողովուրդը դժբաղդութիւն է ունեցել իր հայրենիքը դարձնել... Յօդուածի վերջում պարտք ենք համարում յայտնել, որ մեր նպատակն էր այս յօդուածով մօտաւորապէս ցոյց տալ՝ նախ երկու դրացի ազգերի՝ վրացիների և հայերի պատմական գոյութեան ճակատագրական տարբերութիւնը և երկրորդ՝ կաթողիկոսութեան անհրաժեշտութիւնը հայ ազգի համար,—և ոչ թէ ջատագով հանդիսանալ հոգևորականութեան, իբրև մի կղերական դասակարգի: Փաստ է, որ հայ հոգևորականութիւնը իր դասակարգային պակասութիւններով հանդերձ՝ տուել է նաև մի շարք հոգևոր գործիչներ՝ կաթողիկոսից սկսած մինչև վերջին տիրացուն, որոնք իրանց յետադիմական վարմունքով ու ազգակործան գործունէութեամբ մեծամեծ չարիքներ են հասցրել հայ ժողովրդին, և միմիայն «Մշակը» իր երեսունվեցամեայ գրական գործունէութեամբ, որպէս արթուն պահապան հայ ժողովրդի շահերի, միշտ բարձրաձայն բողոքել, մերկացրել ու մերկացնում է մեր փառասէր, շահամոլ և հակաժողովրդական հոգևոր գործիչներին. «Մշակը» շարունակ կուել է այն լպիրշ հոգևոր գործիչների դէմ, որոնք կամեցել են հայկական, ռամկավարական սկզբունքներ պահպանած ժողովրդական եկեղեցին ու կաթողիկոսական հաստատութիւնը դարձնել նեղ՝ անձնական, կղերական կամ կուսակցական շահերի միջավայր... և հակառակը՝ «Մշակը» միշտ պահանջել ու դրուատել է հայկական ժողովրդական եկեղեցու ռամկավարական հիմունքների ընդլայնումը և կաթողիկոսութեան ու ժողովրդի շահերի սերտ շերտաւորումը, իբրև պահանջ մեր կեանքի առաջադիմական վերածնութեան:

Ա. Նազարէթեան

ՊՐՈՖ. Ն. ՄԱՌԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

—

Մոսկվա, 5 մարտի

Փետրվարի 21-ին Լազարեան ճեմարանի մեծ դահլիճում, Պետերբուրգի համալսարանի հայոց լեզուի պրոֆ. Ն. Մառը՝ բազմաթիւ հայ և օտար հասարակութեան ներկայութեամբ, $8^1/_2$ ժամին երեկոյեան, կարդաց երեք ընդարձակ դասախօսութիւններ հետևեալ ծրագրով:

Առաջին դասախօսութիւն. — Անի քաղաքի պատմութիւնը նախ քան պեղումները: Անիի քաղաքատեղը. Անի քաղաքի պատմութեան մատենագրական աղբիւրները: Քաղաքի իրականութիւնների և եւրոպական ճանապարհորդների մասին, որոնք յաճախել են Անին: Մատենա-պատմական դպրոցը աւանդական ազգային (հայկական) տեսակէտից և Հայաստանի պատմական կեանքի րէալական հոսանքը: Անիի պատմութեան սահմանները: Անիի պատմագիրները: Հայագիտութիւն և գիտական արևելագիտութիւն: Շրջան, ուր միտք ծագեց Հայաստանի պեղումների մասին: Սիստեմատիկ պեղումների սկիզբն Անի քաղաքում:

Երկրորդ դասախօսութիւն. — Պեղումներ Անիում: Առաջին պեղումները (1892 թ.). սուրբ Գրիգորի նկարազարդ տոհմային եկեղեցին XII—XIII դար: Երկրորդ պեղումները (1893 թ.). երկու եկեղեցիներ, մէկը յանուն Աստուածամօր տիկին Հոռոմի (1217), միւսը յանուն Աստուածամօր՝ Խամբուշենց տոհմի, Թագաւորների ժամանակակից, և Անիի քաղաքային հին պարիսպները, որ շինել է Աշոտ Բագրատունին: Երրորդ պեղումները (1904 թ.). բանւոր դասակարգի բնակութեան տներ: Չորրորդ և հինգերորդ պեղումներից (1905—1906 թ.), բլրի պեղումը, ուր գտնվում է Գագիկ I-ի բոլորաձև տաճարը. բոլորաձև տաճարի մասին պեղումներից, տաճարի մէջ և նրա մօտ գտնված առարկաների, չքաւորների բնակարանների մասին. Գագիկի ս. Գրիգոր տաճարի մօտ եղած շէնքը՝ նախասենեակի ծաղկանկար մօզաիկական ֆասադով: Մասնակի պեղումներ Առաքելոց տաճարի մօտ: Վեցերորդ պեղումները (1907 թ.). Անիի միջնաբերդը Բագրատունեաց պալատի մնացորդներով:

Երրորդ դասախօսութիւն.—Անիի պատմութեան լուսաբանումը պեղումներից և առհասարակ իրականութիւններից: Երկրի մակերևոյթի վրա պահպանված յիշատակարանների մնացորդների դիտողութիւններ: Քաղաքական բնակարաններ և նրանց պէսպէս նշանակութիւնը: Բաղխդոնեան եկեղեցին յանուն ս. Գրիգորի, որ շինեց Տիգրան Հոնենց 1215 թւին. Նրա որմանկարները (фрески) և ճարտարապետութիւնը: Հայոց ազգի համաժամութիւնը հարևան ազգերի հետ XII—XIII դարերում և հոգևոր-նիւթական հերձուածը բուն հայութեան մէջ (պաւլիկականութիւն) XI դարում: Հայերի գաղափարական ազգականութիւնը և հաղորդակցութիւնը հարևանների հետ ճարտարութեանց յիշատակարանների լուսաբանութիւնից: Հայկական ազդեցութիւնը սելջուկեան ճարտարապետութեան վրա: Անին հայկական նախնագոյն ճարտարութեան խնդրում: Անեցոց կուլտուրական առաջադիմութիւնը հայոց Բագրատունեաց անկումից յետոյ՝ զանազան ազգութիւնների մասնակցութեամբ համերաշխ սոյն առաջադիմութեան խնդրում: Անեցոց հասարակական վերածնունդը: Անիի պեղումների նշանակութիւնը: Ամփոփում:

Այս երեք ընդարձակ դասախօսութիւնները պ. Մառը կարդաց գեղեցիկ առոգանութեամբ և վերջացրեց 12 ժ. 10 ր.: Առաջին և երկրորդ դասախօսութիւնից յետոյ 15-ական րոպէ ընդհատում եղաւ: Ընթերցանութեան ժամանակ մոգական լապտերի միջնորդութեամբ էկրանի վրա ի ցոյց էին դրվում Անիի պարիսպները, տաճարները, աշտարակները, Թագաւորական և իշխանական ապարանքները պէսպէս սենեակներով ու մուտքերով, յատակի մօզաիկան, որմնազարդերը, զանազան բրեղէններ և առարկաներ, սիւներ և դրանց խոյակները (капители) և խարիսխները (базы) զանազան ձևի ու տեսակի ամաններ, կարասներ, ճարտարապետական բեկորներ և հայոց Գագիկ Թագաւորի ամբողջ արձանը՝ արքական շալման գլխին: Դասախօսութիւնները հիանալի տպաւորութիւն գործեցին հանդիսականների վրա, որոնք բուռն ծափահարութիւններով վարձատրեցին շնորհալի գիտնականին: Մուտքից գոյացած գումարը նշանակված է դարձեալ պ. Մառի ապագայ պեղումները շարունակելու համար: Այս տարվայ աշնանը յարգելի պրոֆեսորը մտադիր է լոյս ընծայել իր այս դասախօսութիւնները նկարներով հանդերձ: Այսպէս՝ շնորհիւ պրոֆ. Մառի անխոնջ աշխատասիրութեան և նրա զուտ անգլիական յամառութեան ձեռնարկած գործում՝ մենք այժմ կարող ենք բաւականին ճիշտ գաղափար կազմել մեր միջին դարերի նախնեաց նիստ ու կացի և կուլտուրական բարգաւաճման մասին. իսկ հին կեանքի մասին մենք տակաւին ոչինչ չը գիտենք: Հայոց հնագոյն մայրաքաղաքները՝ Արտաշատ, Երուանդաշատ, Վաղարշապատ, Դուին և այլն դեռ ևս սպասում են իրանց Մառերին:

Մ. Շովրեան

P. S.—Անցեալ դեկտեմբերին, երբ պրոֆ. Մառը Բագւում էր, պրոֆ. Գ. Խալաթեանցը տեղիս հայ հասարակութեան խնդրանօք հեռագրով հրաւիրեց պ. Մառին ճանապարհին՝ դէպի Պետերբուրգ՝ կանգ առնել Մոսկվայում և մի դասախօսութիւն կարդալ Անիի պեղումների մասին: Պ. Մառը տուեց իր հաւանութիւնը: Բայց երբ ժամանեց տեղս, Ս. Շահազիզեանցի մահվան պատճառով յետաձգեց իր դասախօսութիւնը մինչև Վարդանանց տօնի օրը՝ փետր. 21-ը և այդ օրը կարդաց երեք դասախօսութիւններ վերոյիշեալ ծրագրով:

Մ. Շ.

ՅԱՐԳԱՆՔ ԱՐՓԻԱՐԻՆ

—

Եգիպտահայք անհուն համակրանքով կը յարգեն յիշատակը Արփիարին: Ու կը մտածեն ընդ փոյթ անոր կարմիր հողին վրայ յուշարձան մը կանգնել: Ազնիւ գուրգուրանք, վշտացած սրտերէ բղխող սիրուն գաղափար: Կը գովենք. և կուրախանանք, որ եգիպտահայը ասպետօրէն կը շարժի: Ու մտածեցէք որ Արփիար այդ հասարակութեան մէջ երեք տարի միայն գրիչ շարժեր է: Իսկ Կովկասի մէջ ամբողջ քառորդ դար մը՝ Արփիար իր թղթակցութիւններով բացեր է Թիւրքահայ համայնքին ազգային ժամանակակից պատմութիւնը: Կը յիշէք անշուշտ թէ «Մշակի» հիմնադիր Գ. Արծրունին ինչ հիացումով կը հրատարակէր իր թղթակցին այն կրակոտ յօդուածները. և այսօր գրչի մարտիրոսին յիշատակը կը տեսնենք յարգուած հեռագիրներով, յօդուածներով, հոգեհանգիստներով. «Մշակի» մէջ կը սրբանայ մտքի անկախութեան անվեհեր նահատակը: Բայց այսքանը բաւական չէ: Իր յիշատակը անմահացնելու համար Հայկակի թղթակցութիւնները պէտք է հատորով մը հրատարակել. ու ծախքը կարող են հոգալ իր վրայ հիացող «Մշակի» հազարաւոր ընթերցողները: Առաջարկս՝ ողբացեալին ըղձանքը կրնաք ընդունիլ:

(Իտալիա) Ե.

«Մշակի» խմբագրութիւնը մեծ համակրութեամբ ողջունում է այս առաջարկը և ամեն ջանք գործ կը դնէ իր կողմից ևս իրականացնելու:

ԴԱՐՁԵԱԼ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

(Արփիար Արփիարեան)

V *)

Նախորդ յիշողութիւններիցս մէկի մէջ արդէն առիթ էի ունեցել յիշատակելու, որ Փուռ-Գափուի հայկական անդրանիկ ցոյցից յետոյ, երբ ամբողջ հայ հասարակութիւնը ցնցվել ու «գործելու» պահանջ էր զգացել, առաջին գործը, որ կատարվել էր Կովկասում, կամ աւելի ճիշտ է ասել՝ Թիֆլիսում, այն էր եղել, որ մի նեղ շրջանում փող էր հանգանակվել Կուկունեանին ու Սարկաւագին իրանց խմբով «Հայաստան ուղարկելու» նպատակով: Այդ ժամանակ Դաշնակցութիւնը դեռ կազմակերպված չէր, և այդ գործի գլուխը կանգնել էին Գր. Արծրունին ու մի բժիշկ, որը դեռ կենդանի է: Ցիշեալ խումբը ճանապարհ էր դրված արդէն, երբ ես Պոլսից Թիֆլիս վերադարձայ: Իսկ Արծրունին էլ Կօջոր էր գնացել ամառվայ շոգերից ապաստանելու: Սա, լսելով իմ վերադարձը, լուր էր ուղարկել, թէ կարևոր խօսելիք ունի ինձ հետ: Ի հարկէ, ուրախութեամբ գնացի Կօջոր: Հազիւ էինք միմեանց բարևել, երբ Արծրունին ինձ մի կողմ քաշեց և ասաց.

— Գիտէք, պ. Խանազատեան, Կուկունեանին ճանապարհ դնելուց յետոյ, իմ և բժ. X...եանի մօտ դեռ էլի մի որոշ գումար է աւելացել: Լսելով, որ դուք եկել էք և էլի մտադիր էք գնալ «գործելու», մենք որոշեցինք այդ գումարը ձեզ տալ: Գնանք, ես ձեզ բժշկի հետ էլ ծանօթացնեմ. նա մեծ ցանկութիւն ունի ձեզ տեսնելու:

Ի հարկէ, ես ուրախութեամբ ծանօթացայ բժշկի հետ էլ և շնորհակալութեան զգացմունքներս յայտնեցի երկուսին էլ, իրանց կայացրած որոշումի համար, բայց առաջարկված գումարը առայժմ չընդունեցի, ասելով որ դեռ ես յայտնի չէ, թէ երբ պիտի կարողանամ գնալ:

— Երբ որ գնալու լինեմ, ձեզ կասեմ,— ասացի,—և դրամն էլ ուրախութեամբ կը վերցնեմ, եթէ կարիք ունենամ:

Ահա հէնց այդ գումարի մասին էր, որ ես ակնարկեցի Արփիարին Երևանում, վերոյիշեալ խօսակցութիւնիցս միթէ երկու ամիս յետոյ:

Արփիարը կանխել էր ինձ և հէնց ինքն էր գնացել Արծրունու մօտ ու գումարը խնդրել: Արծրունին նրան վերջնական պատասխան չէր տուել և շտապել էր ինձ մօտ գալու:

— Արփիարեանը երէկ երեկոյեան ինձ մօտ էր և փող խնդրեց. ասաց, որ դուք էք ասել, թէ ինձ մօտ գումար կայ: Արդեօք կարելի է նրան տալ այն գումարը, որ մենք որոշել էինք ձեզ տալ, և նպատակայարմար է առհասարակ Արփիարեանին յեղափոխական գործերի համար գումար տալը:

— Այո, պ. Արծրունի, ես յայտնեցի նրան, որ ձեզ մօտ գումար կայ, բայց թէ որ աստիճան նպատակայարմար է նրան գումարներ տալը, այդ հարցը դուք աւելի լաւ կարող էք որոշել: Եթէ դուք ինձ հարցնում էք այն տեսակէտով, որ որոշել էք այդ գումարը ինձ տալ, այդ պարագայում կարող էք հանգիստ լինել: Ինչպէս տեսնում էք, ես հիւանդ եմ ու չը գիտեմ էլ թէ երբ պիտի առողջանամ: Իսկ երբ առողջանամ և գնալու լինեմ «գործելու», անշուշտ ինձ համար դրամ կը գտնվի յետոյ: Տարօրինակը այն է, որ Պոլսում եղած ժամանակ Արփիարն ու իր ընկերները ոսկու լեռներ էին խոստանում, տասնեակ հազար ոսկիների անունից էին խօսում, իսկ այժմ եկել է ու մեզնից է փող խնդրում: Ահա հէնց այդ հանգամանքն է ինձ զարմացնում:

— Իսկ ինչպէս էք դուք գտնում նրա այն ծրագիրը, որի համաձայն կամենում են երկրորդ ցոյցը կազմակերպել Պոլսում. մի՞թէ դա մի կատարեալ ֆանտազիա չէ,— հարցրեց Արծրունին:

— Ի հարկէ ֆանտազիա է: Բայց նա ասում է, որ մեզ այսպէս է թւում նրա համար, որ մենք Պոլիսը չենք ճանաչում, և ամենից գլխաւորն այն է, որ նա խոստանում է իր այդ ծրագիրը մեր այնտեղի վարչական մարմնի քննութեանը ենթարկել և առանց այդ մարմնի ոչինչ չանել:

— Ուրեմն ձեր կարծիքն ինչ է, փող տալ Արփիարեանին,—հարցրեց նա, շեշտակի երեսիս նայելով:

— Այդ որոշումը աւելի ձեզնից է կախված, պ. Արծրունի,—ասացի.—յամենայն դէպս ես հակառակ չեմ տալուն, միայն թէ դուք ես պատուիրեցէք, որ ինքնագլուխ և առանց մեր այնտեղի վարչական մարմնի ոչինչ չանեն Պոլսում:

— Այո, այդ ես կասեմ,—ասաց Արծրունին,—և մի հազար րուբլի կը տամ. եթէ ցոյցն էլ չը կատարեն, վստահ եմ, դրամը ի զուր տեղը չի կորչի:

Արփիարը հազար րուբլին Արծրունուց ստանալուց յետոյ այլևս երկար չը մնաց Երևանում. նա շուտով մեկնեց Թիֆլիս, իսկ այնտեղից էլ վերադարձաւ Պոլիս:

Պոլիս հասնելուն պէս Արփիարեանը ձերբակալվել ու բանտ էր նետվել, իսկ իր ընկերները, այդ բանից սարսափած, իսկոյն փախուստի էին դիմել և գնացել Եւրոպա: Այդ գումարի մի մասը ծախսվել էր նրա ընկերների փախուստի համար, իսկ մնացածի մասին ոչինչ չը գիտեմ: Ի նկատի ունենալով Արփիարի վերջին տարիներում քաշած չարքաշ կեանքը և վերջին ծայր կարօտ վիճակը, ես բոլորովին մտադիր չեմ նրա յիշատակը արատաւորել դրամական տեսակէտով:

Արփիարը բաւական երկար ժամանակ մնաց բանտում, և բանտից ազատվեց միմիայն իր հռչակաւոր ու պատմական մեղայականի շնորհով, որը և իրապէս վարկաբեկ արեց Արփիարին ոչ միայն յեղափոխական կազմակերպութիւնների այլ և բոլոր բանիմաց մարդկանց աչքում:

Բայց ահա գալիս է 1895 թւականը, այն թւականը, երբ ամբողջ հայ աշխարհը իրարանցումի մէջ էր ընկած: Իրարանցումի մէջ էր ընկած և եւրոպական ամբողջ դիպլոմատիան. այլ ևս ոչ ոք չէր կասկածում, թէ «հայկական հարցը» այսօր կամ վաղը պիտի վերջնականապէս լուծվի և «Հայաստանը» ազատութիւն պիտի ստանայ: Ժամանակը և հանգամանքները նորից ոգեւորում են Արփիարին, և ահա նա կամաց-կամաց նորից դուրս է գալիս իր առանձնացած դրութիւնից ու սկսում է հնչակեաններին մօտենալ: Սրանք սկզբում խուսափում են Արփիարից, աշխատում են նրան հեռու պահել գործերից, բայց չէ լինում. ոգևորված ու սիրտ առած Արփիարը հետզհետէ նրանց վստահութիւնն է գրաւում և աւելի ու աւելի մօտենում նրանց:

Այդ ժամանակ Պոլսում ձերբակալվում են հնչակեան տեղական վարչութեան համարեա թէ բոլոր անդամները. ազատ մնում է միայն մէկ հոգի, եթէ չեմ սխալվում, Պետրոս անունով: Ժամանակները այնպէս խառն են ու ընդհանուր դրութիւնը այնպէս կրիտիքական, որ հնարաւորութիւն չը կայ ընտրողական սիստեմով լրացնել վարչութեան կազմը: Հին վարչութեան ազատ մնացած այդ մէկ անդամը՝ Պետրոսը պիտի կօօպտացիայի սիստեմով լրացնի վարչութեան կազմը: Նա մտածում է Արփիարին հրաւիրել վարչութեան մէջ, բայց չէ համարձակվում, և ահա նամակով դիմում է կուսակցութեան կենտրոնական վարչութեանը, Լօնդօն, ու սրա խորհուրդն է հարցնում: Կենտրոնական վարչութիւնը նրան պատասխանում է. «Երբեք այդպիսի բան չանէք, որովհետև Արփիարին անկարելի է այդ աստիճան վստահանալ»: Իսկ կենտրոնը այդ պատասխանն է տալիս ոչ միայն Արփիարեանի պատմական մեղայականի հիման վրա, այլ և նրա համար, որ հնչակեան կուսակցութեան ականաւոր և շատ վստահելի գործիչներից մէկը, որը երկար ժամանակ բանտերում տառապելուց յետոյ մեծ երաշխաւորութեամբ արձակ էր թողնված Պոլսում, գրել էր կենտրոնին, թէ Արփիարը գաղտնապէս խոստում է տուել կառավարութեանը մատնութիւններ անելու:

Թէ որ աստիճան ճիշտ էր այդ ականաւոր ու «շատ վստահելի» գործչի գրածը Արփիարի մասին, կարելի եղաւ հասկանալ միայն շատ ամիսներ յետոյ, երբ թէ այդ «գործիչը» և թէ «մատնութիւններ անելու խոստում տուող» Արփիարը Լօնդօնումն էին և, իբրև ամենամտերիմ ու աջակից ընկերներ, պայքարում էին վերոյիշեալ «կենտրոնի դէմ:

Այսպէս կամ այնպէս, Լօնդօնի կենտրոնական վարչութիւնը վերոյիշեալ պատասխանն էր տուել Պետրոսին Արփիարի վերաբերեալ: Սակայն շատ քիչ անցած, կենտրոնը հետևեալ տողերն է ստանում նոյն Պետրոսից Արփիարի առիթով.

«Արփիարը այն աստիճան մօտիկէն ծանօթացած էր մեր ներքին գործերուն և այնչափ շատ գաղտնիքներ գիտէր, որ անկարելի էր անոր վարչութեան մէջ չառնել. եթէ չառնէինք, աւելի գէշ կրնար ըլլալ: Արփիարը այժմ վարչութեան անդամ է»:

Ինչպէս տեսնում էք, կատարեալ հոսհոսական վարմունք և տրամաբանութիւն. մարդու վրա և կասկածում են և միևնոյն ժամանակ նրան բոլոր կուսակցական գաղտնիքներն են յայտնում: Կենտրոնի կարծիքն են հարցնում, բայց և միևնոյն ժամանակ ստացած կարծիքի հակառակն են վարվում, պատճառաբանելով թէ՝ «Եթէ անոր (այսինքն՝ կասկածելի մարդուն) վարչութեան մէջ չառնէինք, աւելի գէշ կրնար ըլլալ»:

Բայց, ի հարկէ, կասկածները լոկ կասկածներ էլ մնացին. ես, գոնէ, ոչ մի դէպք չը գիտեմ, որի համար ասէին, թէ դա Արփիարի մատնութեան գործն է:

Այդպիսի անտեղի կասկածներից արդեօք դրդված, թէ հնչակեան կուսակցութեանը հարուած հասցնելու դիտումով, Արփիարի հնչակեան վարչութեան մէջ մտնելուց շատ քիչ յետոյ, Պոլսի Դաշնակցութեան կոմիտէն որոշում է Արփիարին տերրորի ենթարկել և սպանութեան փորձ է կատարվում: Փորձը անյաջող էր, Արփիարեանը կենդանի մնաց, իսկ այդ փորձն էլ միանգամայն նպաստաւոր հետևանք ունեցաւ Արփիարի համար բարոյական տեսակէտից:

Այն նոյն հնչակեան կենտրոնը, որը խիստ զգուշանում էր Արփիարին Պոլսի վարչութեան ու կուսակցութեան մէջ թողնելու, դաշնակցականների կատարած մահափորձից յետոյ ստիպված էր «Հնչակի» միջոցով պաշտպանել Արփիարին ու նրան բոլորովին իր հովանաւորութեան տակ առնել: Այդ հանգամանքը չափազանց նպաստեց Արփիարին, նրա վարկը նորից ու առաջվանից էլ աւելի բարձրացաւ, մանաւանդ հնչակեան շրջերում, և նա շատ աւելի նշանաւոր տեղ սկսեց բռնել կուսակցութեան մէջ, քան նոյնիսկ ինքը կարող էր սպասել:

Խ. Ազատ

---

*) Տես «Մշակ» № 50.

ՄԻ ԿՏԱԿ

—

Լեհաստանի Իվանգորոդ քաղաքում վախճանված բժշկապետ Ալէքսանդր Տէր-Յարութիւնեան Տէր-Յարութիւնեանցը իր շարժական և անշարժ կայքը, որ հասնում է 50,000 ր., կտակել է ազգին մի այսպիսի հետաքրքրական և իմաստալից նպատակով.

Իր գրադարանը թողնում է Կովկասի հայոց բարեգործական ընկ. օգտին, իսկ «անշարժ կալուածքս և դրամական գումարս, ինչ էլ որ դրանք ներկայացնեն, իմ մահից յետոյ կտակում եմ իբրև լիակատար սեփականութիւն Էջմիածնի վանքին, որը պարտաւոր է կալուածքիս արդիւնքներից և դրամական գումարների տոկոսներից իւրաքանչիւր տարի տալ ցմահ իմ քրոջ՝ Նատալիա Տիգրանեանցին 600 ր., որը պարտաւոր է խնամք տանել իմ մօրս մասին մինչև նրա մահը. իսկ եկամուտների և տոկոսների մնացած մասով պէտք է ձեռք բերել իւրաքանչիւր տարի գեղջկական հողային սեփականութիւն, անհրաժեշտ գեղջկական ինվենտարով միասին, այն չքաւոր հայ-գրիգորեան դաւանութեան գեղջուկների համար, որոնք կը ցանկանան Ռուսաստանից կամ ուրիշ թագաւորութիւններից տեղափոխվել Թիւրքիայի՝ հայերով բնակված Վանի, Էրզրումի, Դիարբեքիրի, Մշոյ և Սվազի նահանգները, իսկ եթէ այդ փողերը ինչ և ինչ պատճառներով անհնարին կը լինի յիշեալ նպատակի համար գործադրել, այն ժամանակ անշարժ կալուածքներիս եկամուտը և դրամական գումարիս տոկոսները պէտք է դրամագլխին մինչև այն ժամանակ աւելացնել, մինչև որ մի գումար կը կազմվի, որի տոկոսները բաւական կը լինին Վան քաղաքում իմ անունով հայ-գրիգորեան, երեսուն հոգուց ոչ պակաս, որբ երեխայոց համար կառուցանելի որբանոցի հիմնարկութեանը և պահպանութեանը. այդ որբանոցը պէտք է ունենայ և ուսումնարան երեխաներին՝ գրագիտութիւն, գիտատնտեսութիւն և արհեստներ սովորեցնելու համար, ուր առարկաների դասաւանդումը պէտք է հայ լեզուով լինի: Եթէ այդ որբանոցի հիմնարկութիւնը Թիւրքական կառավարութիւնը չը թոյլատրէ, այն ժամանակ անշարժ կալուածքներիս եկամուտները և դրամագլխիս տոկոսները պէտք է իմ անունով իբրև թոշակներ գործադրվեն հայ-գրիգորեան դաւանութեան պատկանած այն երիտասարդ մարդոց համար, որոնք կաւարտեն Էջմիածնի հայ հոգևոր ճեմարանի դասընթացքը և կը ցանկանան զանազան գիտութիւններում կատարելագործվել արտասահմանեան բարձրագոյն ուսումնարաններում: Իմ քոյր՝ Նատալիա Տիգրանեանցին ցմահ տրվելիք վեց հարիւր րուբլին, իր մահից յետոյ, պէտք է գործադրվի այս կտակի երրորդ և չորրորդ կէտերում յայտնած իմ կամքիս և կատար ածելը ես յանձնում եմ ամենայն հայոց կաթողիկոսին, Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարքի հետ միասին»:

Հանգուցեալի հարազատ քոյր՝ Նատալիա Տիգրանեանցը խնդրամատոյց է եղել թէ հանգուցեալ վեհափառ կաթողիկոսին և թէ Կ. Պոլսի պատրիարքին իր հանգուցեալ եղբօր մարմինը Լեհաստանի Իվանգորոդից, ուր իր կենդանութեան ժամանակ պաշտօնով Կարսից փոխադրվել էր իբրև գլխաւոր բժիշկ, տեղափոխել Թիֆլիս՝ թաղելու կամ մեր հայկական Պանթէոն Վանքի, կամ իր հօր պաշտօնատեղի ս. Նշան եկեղեցու բակում: («Մեր Զանգը»)

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Զինւորական-նահանգական վարչութիւնը անուշադիր է թողել հետևեալ անձերի վճռաբեկ բողոքագրերը, որոնք կովկասեան զինւորական դատարանից մահվան են դատապարտվել. 1) Քութայիսի նահանգի բնակիչ Արամ Զիկօբերիձէ, որ մեղաւոր ճանաչվեց սպանութեան և փողոցում զինված յարձակում գործելու մէջ, 2) գիւղացի Կվաբացխելի—երեք կողոպտումների մէջ և 3) պարսկահպատակ Մովսէս Մալխասեան—մի քանի մարդկանց հետ կանխամտածված կերպով խուզարկու ոստիկան Ուգուրլիեվին սպանելու մէջ:

—

Կովկասեան զինւորական-նահանգական դատարանը Քութայիսում քննելով Գալակտիոն Մօրչաձէի գործը, որ մեղադրվում է քաղաքապահ Կապանաձէին և հրէայ Դանիէլ Պապիաշվիլուն սպանելու մէջ, մեղաւոր ճանաչեց նրան և դատապարտեց մահվան պատժի կախաղանի միջոցով:

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Աւճալեան ժողովրդական թատրօն

Աւճալեան բեմի սիրողները տոկունութեամբ շարունակում են իրանց ներկայացումները:

Կիրակի, ամսիս 9-ին էլ նրանք խաղացին Շիրվանզադէի «Պատւի համար» դրաման՝ մասնակցութեամբ պ. Վանշիրի:

Պ. Վանշիր բեմ երևալուց իսկոյն ցոյց տուեց, որ ինքը մի փորձված և շնորհալի դերասան է. և իրօք, Անդրէաս Ելիզբարեանի պատասխանատու դերը սկզբից մինչև վերջ նա տարաւ առանց մի որևէ անհարթութեան: Ուժեղ և բաւականին դրամատիկ էր նա այն տեսարանում, երբ գիշերվայ ուշ ժամին իր գրասենեակից Օթարեանի թողած դոկումենտներն էր յափշտակում:

Օր. Ոսկանեան, որ միշտ բարեխիղճ է և միշտ լաւ գիտէ իր դերերը, այս անգամ ինքն իրան գերազանցեց: Այս օրիորդը, որ դեռ շատ ջահել սիրող է, մի քանի գնում առաջադիմում և լաւ յոյսեր է տալիս:

Մարգարիտի դժուար դերը նա տարաւ շնորհալի դերասանուհու հմտութեամբ. վերջին—հօր յափշտակած դոկումենտները յետ պահանջելու տեսարանում նա այնքան սրտաշարժ խաղաց, որ յուզեց հանդիսականներին: Ափսոս միայն, որ օրիորդի ձայնը չունի այն ոյժն ու կորովութիւնը, որը անհրաժեշտօրէն պահանջվում է խիստ դրամատիկ տեղերում: Այդպիսի տեղերում նրա ձայնը աւելի շուտ քնքոյշ է, զգայուն, քան ուժեղ. յուզվող, մարվող, բեկբեկուն է, քան ազդող, ներշնչող, յաղթանակող: Միւս սիրողներից աչքի էին ընկնում տիկ. Յասմիկ, որը խաղում էր Ելիզբարեանի կնոջ դերը. իր դերը լաւ ըմբռնելով, նա կարողացաւ աչքով ներկայացնել որպէս քնքոյշ, բարի մայր և տանջված կին-ամուսին: Օրիորդ Աստղիկ Ռօզալիայի դերում խաղում էր առանց յուզվելու և համարձակ, չը նայած որ առաջին անգամն էր բեմ դուրս գալիս:

Պ. Մակարեան Սուրէնի դերում կենդանութիւն էր տալիս բեմին իր տեմպերամենտով. ափսոս միայն, որ իր դերը լաւ չէր սովորել:

Պ. Ահարոնեան Սաղաթէլի դերում սպասած տպաւորութիւնը չը թողեց ու չարդարացրեց մեր յոյսերը. նա հէնց սկզբից կարծես տրամադրված չէր խաղալու: Գրիմը շատ վատ էր:

Պ. Բաբեան Օթարեանի դերում... Ինչ ասենք այս երիտասարդի մասին. պարոնը թէև սովորել է դրամատիկական կուրսերում, այնուամենայնիւ մնացել է բոլորովին անմշակ. նա շատ է աշխատում լաւ խաղալ, բայց նրա խաղը միշտ դուրս է գալիս անբնական, բռնազբօսիկ. զուր յուզվում է, չափազանց շատ է բարձր ու քաշ անում յոնքերը, աջ ու ձախ տատանում ուսերը, շարունակ ձեռքերի մէջ ճմլում գլխարկը և այսպէս սանտիմենտալութիւնների մէջ ընկնելով, հին շկօլայի դերասանութիւն է անում, որից հարկաւոր է անպատճառ հրաժարվել։

Գ. Շիրինեան Բագրատի դերը լաւ գիտէր, խօսում էր շտապ-շտապ, բայց պահպանեց անսամբլը։

Մնացած սիրողների մասին բաւական է ասել, որ պ. Ճանիկեան լաւ էր հաշւապահի դերում, պ. Վ. Բէժանեան ծիծաղաշարժ սպասաւորի և օրիորդ Սիրուշ՝ կարծես թըմբրած աղախնու դերում։

Յ.

—

Շնորհալի դերասանուհի օր. Սաթ. Ագամեանի ղեկավարութեամբ, Հալաբարի մոռացութեան տրված թատրօնը նորից վերակենդանութիւն է ստացել։ Կազմվել է թատերասէրների մի խումբ, դերասան պ. Արմէնեանի ընժխօրութեամբ, և շատ էժանագին ու մատչելի գներով ներկայացումներ են սկսել տալ հասարակ ժողովրդի համար։ Ամսիս 9-ին խումբը տուել է իր առաջին ներկայացումը. խաղացել են Շիլլերի «Աւազակները», որին սակայն, ցաւում ենք, մենք չը կարողացանք ներկայ գտնվել, բայց, ինչպէս լսեցինք, ներկայացումը շատ աջող է անցել. ոչ միայն շատ լաւ են խաղացել իրանց դերերը օր. Ս. Ագամեան (Ամալիա) և Արմէնեան (Ֆրանց), այլ և բոլոր սիրողները, որոնց խաղը ոմանք նոյնիսկ մեր դերասանների խաղի հետ են համեմատում։

Օր. Ագամեանի վարչութեամբ կազմված այդ խումբը մտադրութիւն ունի այս մեծ պասի ընթացքում 6—8 ներկայացումներ տալ։ Այսօր—հինգշաբթի—պիտի ներկայացնեն «Ապահարզանի սիւրպրիզներ» պիէսը, որ երեք օր առաջ խաղացվեց ժողովարանում։ Խմբի ռեպերտուարի մէջ մտնում են նաև «Վանիւշինի զաւակները», «Հրէաներ», «Թիթեռնիկների կռիւը» և «Կառապան Հենշել» պիէսները։ Այդ բոլոր ներկայացումների համար աբօնեմենտներ են բացված և, ինչպէս իմացանք, բաւականին գրվողներ եղել են արդէն։

Մի շատ մխիթարական բան, որ նոյնպէս լսեցինք մենք, այն է, որ առաջին ներկայացման ժամանակ թատրօնում վերին աստիճանի լաւ կարգապահութիւն է եղել, կարգապահութիւն, որից առհասարակ միշտ զուրկ էր լինում Հալաբարի թատրօնը։

Հասարակութեանը յարմարութիւններ տալու համար, գալերէան էլ բաժանված է այժմ, որը, ի հարկէ, նոյնպէս շատ նըպաստում է կարգապահութեանը։

Պէտք է յուսալ, որ հասարակութիւնը սիրով կայցելի Հալաբարի ներկայացումներին և իր այցելութեամբ կը խրախուսի օր. Ագամեանի և իր ընկերների ջանքերով սկսված բարի գործը։ Ռ.

—

Բագու, 10 մարտի

Մարտի 9-ին, ցերեկով, մի խումբ դերասաններ և սիրողներ, Թաղիեվի թատրօնում, ի նպաստ դերասան Բ. Աբովեանի տուին ներկայացում։ Խաղացին «Ղաչաղ-Արսէն» վրաց. թարգմ. 3 գործ. դրաման և «Նկարիչներ» 1 գործ. վօդեվիլը։ «Ղաչաղ-Արսէն» պիէսում դերակատարներից օր. օր. Մելիք-Շահնազարեան (Սիդօնիա), Անիա (Նինօ), պ.պ. Աբովեան (Արսէն), Թաղլանեան (գինեվաճառ) և Յ. Տէրունի (Պէտրէ) իրանց դերերը կատարեցին բաւարար։ Մի բան, որ տպաւորութիւնը փըչացնում էր, դա թարգմանութեան ուղղակի «մլթօնավարի» լինելն էր, ինչպէս և այն հանգամանքը, որ դերակատարներից ոմանք իրանց դերերը չէին սովորել։ Վօդեվիլն աշխոյժ անցաւ։ Տոմսակներն զգալի չափով էժանացրած էին (1 ր. 50 կ.—10 կ.)։

Ներկայացումը գրաւել էր ժողովրդի ստորին խաւերից բաւականաչափ հանդիսականներ։

Մուտքը բաւարար էր։

Սիրող-Բնար

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Շուշի, 10 մարտի

Հաճելի է մեզ «Մշակի» ընթերցողներին հաղորդել մի ուրախալի լուր, որ տեղի ունեցաւ Շուշու հասարակական կեանքի մէջ։ Քաղաքային գրադարան-ընթերցարանը, որ փակվեց 1906 թւին քաղաքի նիւթական սղութեան պատճառաբանութեամբ, ամսիս 1-ից՝ շնորհիւ մեր քաղաքի ճարտարապետ և քաղաքային վարչութեան ձայնաւոր Մկրտիչ Ղոնդաղսազեանի՝ վերաբացվեց։ Գրադարանը և առհասարակ ընթերցանութիւնը մի մեծ դպրոց է հասարակութեան առաջադիմութեան նպաստաման գործին. այդ փաստ է և մեկնութեան չէ կարօտ։ Թէ մեր ընթերցող հասարակութիւնը ինչպէս կը վերաբերվի դէպի մեր նոբաց գրադարան-ընթերցարանը՝ այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։ Սրանից տարիներ առաջ մեր գրադարան-ընթերցարանը իր գնի անմատչելիութեան, թանգութեան պատճառով բնականաբար չը կարողացաւ գրաւել ժողովրդի չքաւոր դասակարգերը, չը կարողացաւ իր համար ընթերցողներ գտնել արհեստաւորների, մանր վաճառականների, գործակատարների, մշակների շըրջանում։

Այդ անմխիթար դրութեան առաջն առնելու համար գրադարան-ընթերցարանի ներկայ վարչութիւնը սկզբունքով որոշել տուեց քաղաքային վարչութեան՝ ամսավճարը 40 կոպէկից իջեցնել 30-ի, իսկ մուտքը 5 կոպէկից 2-ի։

Գրադարանապետի պաշտօնի համար հրաւիրված է Պօղոս Զաքարեան։ Ողջունելով գրադարան-ընթերցարանի բացումը, քաղցր է մեզ յուսալ, որ մեր հասարակութիւնը ցոյց կը տայ, որ ինքն էլ հետաքրքրվում է հասարակական կեանքով, հասարակական ընթացիկ խնդիրներով և այլն։

Քալնեաղ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Յիշեցնում ենք Թիֆլիսի մեր ընթերցողներին, որ այսօր, հինգշաբթի, արքունական թատրօնում նշանակված է ներկայացում հանգուցեալ դերասան Պետրոսեանի ընտանիքի օգտին։ Յոյս ունենք, որ հասարակութիւնը կայցելէ ներկայացմանը և այդպիսով կը կատարէ իր պարտքը դէպի հանգուցեալը։

◆ Կովկասի Փոխարքան թոյլատրել է Թիֆլիսաբնակ ազնւական Պ. Զարուէվին՝ աւտօմօբիլների հաղորդակցութիւն հաստատել Թիֆլիս-Թէլաւ, Թիֆլիս-Կօջոր-Մանգլիս, և Բօրժօմ-Ախալցխա-Աբասթուման ճանապարհների վրա, և Թիֆլիս-Սղնախ զէմստվային ճանապարհի վրա։

◆ Հանրակրթական դասընթացքների հայկական սեկցիան որոշել է կիրակի օրերը դասախօսութիւններ կարդալ նաև Հալաբարի Արաքսեան թատրօնում։ Առաջին դասախօսութիւնը կը կարդայ Ե. Թոփչեան կիրակի օրը, սպառողական ընկերութիւնների մասին։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յանձնարարել է շինարարական բաժնի գործավար Արէշօվին կազմել այն բոլոր հողաբաժինների ցուցակը, որոնք բարձրագոյն հրամանով գրաւվեցին երկաթուղիների համար և որոնց վերաբերութեամբ կազմված չը կան ոչ կալուածագրեր (купчія крѣпости), ոչ էլ պայմանագիր։ Փաստաթղթերով գրաւված հողաբաժինների տարածութիւնը հասնում է 60 դեսեատինի, որոնց համար քաղաքը ստանալու է 300,000-ից աւելի րուբլի։

◆ Մարտի 11-ին Կվիրիլսկի փողոցում, Իօրամօվի տան մէջ գտնվող ծննդկանների կասսան քննելու համար ընտրված վերստուգիչ յանձնաժողովը յայտնել է ոստիկանութեան, որ մարտի 10-ին, քննելով կասսայի դրամական հաշիւները և բոլոր թղթերը, նա երեան հանեց 20,000 րուբլու վատնում և մի քանի կեղծիքներ, որ կատարել են կասսայի հիմնադիրներ Ելենա Դեկանօզօվան, Նինա Իէրամօվան և Մարիամ Րազմաձէն։ Վերստուգիչ յանձնաժողովը միևնոյն ժամանակ ոստիկանութեան յանձնել է 14 ելումուտի գրքեր և 240 հաշւետետրներ, որոնցից երևում են հիմնադիրների կեղծիքները և վատնումը։ Յանձնաժողովի յայտարարութեան արձանագրութիւնը բոլոր փաստաթղթերի հետ յանձնված են 3-րդ հաշտարար բաժնի քննիչին։

◆ Շաբաթ, մարտի 15-ին, երեկոյեան ժամը 7-ին, Արտիստական ընկերութեան վերին յարկում բժ. Ա. Խատիսեանը կը դասախօսէ «Հիւանդոտ երևոյթները մեր օրերի հասարակական տրամադրութեան մէջ»։

◆ Թիֆլիսում, մարտի 16-ի երեկոյեան ժամը 5-ին, 2-րդ արական գիմնազիայի շինութեան մէջ կայանալու է դպրոցից դուրս կրթութիւն տարածող ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը։

◆ Կովկասեան բժշկական ընկերութեան հերթական նիստը նշանակված է մարտի 19-ին, Թիֆլիսում։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, քաղաքային դումայական դահլիճում նշանակված է Թիֆլիսի քաղաքային դումայի նիստի շարունակութիւնը։

◆ Թիֆլիսն ամեն տարի մօտ 12,000 ր. է ծախսում իր դեղատների համար զանազան պարագաներ ու պիտոյքներ ձեռք բերելու վրա։ Այժմ սանիտարական-բժշկական խորհուրդը որոշել է այդ պիտոյքները բերել տալ ուղղակի վաճառման տեղերից, որով 20°/₀ խնայողութիւն կը լինի։ Այդ նպատակով քաղաքային վարչութիւնից խնդրվում է 3000 րուբլի, փորձի համար մի քանի իրեր բերելու նպատակով։

◆ Բժիշկ Մօնինը մի շարք հրահանգներ և կանօնադրութիւն է մշակել Թիֆլիսի քաղ. ծննդաբերական ապաստարանի համար։ Սանիտարական-բժշկական խորհուրդը ընդունել է յիշեալ կանօնադրութիւնը և հրահանգները մի քանի փոփոխութիւններով։

◆ Թիֆլիսի սանիտարական - բժշկական մարմնի տեղեկութիւններից երևում է, որ վերջին ժամանակս քաղաքում նկատվում է ծաղիկ հիւանդութեան եզակի դէպքեր։ Քութէշն էլ բաւական թուլացել է, իսկ բծաւոր տիֆը յոյս կայ որ չը տարածվի։ Ներկայումս տիֆային հիւանդանոցում պառկած են 12 հիւանդներ։

◆ Թիֆլիսում մարտի 16-ի երեկոյեան ժամը 7-ին կովկասեան բժշկական ընկերութեան ժողովում, որ լինելու է հասարակական, բժ. Զաւրիէվը կը դասախօսէ «բժշկի դերը երեխաների մտաւոր և բարոյական գործում»։

◆ Ստացանք բժ. Սիմ. Շահ-Նազարեանի հետևեալ նոր գրքերը. 1) «Բանաստեղծ քաղաքացին դպրոցական նուիրական ուխտի ասպարէզում» (առված է 1907 թ. դեկտ. 30-ին, Մօսկվայի եկեղեցում Սմբատ Շահազիզի թաղման օրը), Սմբատ Շահազիզի պատկերով, 20 երես, գինն է 10 կոպէկ, 2) «Սեդրակ Մանդինեանը՝ իբր տեսուչ Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի», 100 երես, գինն է 50 կոպէկ։

◆ Մարտի 25-ին ջերմուկախօսական մասնաժողովը կը ձեռնարկէ քննելու Թիֆլիսի արևելեան մասում այն հողերը, ուր կարելի է տեղափոխել այն տանտէրերին և հողատէրերին, որոնց հողերը գրաւվելու են ջերմուկախօսական կայարանի համար։

◆ Երկրագործութեան վարչութիւնը տեղեկացրել է, որ այս մարտի վերջում Պետերբուրգում գումարվելու է գիւղատնտեսական ստորին կարգի դպրոցների հոգաբարձուների համագումարը՝ այդ դպրոցները վերակազմելու խնդիրը քննելու համար։

◆ Մի յատուկ մասնաժողով է ընտրվել Թիֆլիսի քաղաքային բժիշկներ՝ Թարխանեանից, Իգիթեանից, Թաղէոսեանից, Շչերբինինայից և Խատիսեանից, քաղաքային հիւանդանոցից մասնաւոր հաստատութիւններին և անձերին դեղօրայք տալու կարգը որոշելու համար։

◆ Թիֆլիսի էլեք. նաւթուղի գծի վրա մինչև քաղաքային սպանդանոցը կերթևեկէ կանօնաւոր կերպով ապրիլի սկիզբներից։

◆ Երևանից գրում են, որ տեղական բանտից, մարտի 10-ին, պատը ծակելով փախել են աքսորի դատապարտված վեց բանտարկեալներ։ Փախչողներից մէկին ձերբակալել են միւս առաւօտը, իսկ մնացած հինգին բռնելու համար միջոցներ են ձեռք առնված։

◆ Տէրէքի շրջանի ժամ. գեներալ-նահանգապետ Կօլիւբակինը երկրորդել է իր հրամանը, որ արգելում է Վլադիկավկազի, Պետրովսկի և Գրօզնու քաղաքային բոլոր կլուբներում և այլ զուարճատեղիներում մոլի թղթախաղը, լօտօն։ Մեղաւորները կենթարկվեն 3000 րուբլի տուգանքի կամ երեք ամսվայ բանտարկութեան։

◆ Թիֆլիսաբնակ Մուշեղ Քանդարեանը քաղաքային վարչութեան առաջարկել է գնել իր հաց թխելու շոգեմեքենան իր բոլոր պարագաներով, որի համար պ. Քանդարեանը համաձայն է վերցնել 11,000 րուբլի կանխիկ, իսկ մնացած 10,000 րուբլին քաղաքը կարող է վճարել հինգ տարվայ ընթացքում, 6°/₀-ով։ Միաժամանակ Քանդարեանի նախկին բանւորները մի առաջարկագրութիւն են ուղղել քաղաքային վարչութեան, որով մատնանշում են, որ եթէ քաղաքը ձեռք բերէ պ. Քանդարեանի մեքենան, իրանք կարող են յանձն առնել գործը տանել ընկերական հիմունքներով, քաղաքին ամեն տարի վճարելով կապալի գինը։ Իրանց կողմից բանւորները քաղաքից խնդրում են տալ ալիւր, քարածուխ կամ մազութ և ջուր, իսկ իրանք պարտաւորվում են վճարեն իւրաքանչիւր տոպրակ ալիւրից 40 կոպէկ։ Նրանց ասելով, այդ հացաթխարանում կարելի է օրական պատրաստել 650—700 պուդ հաց, որ շուկայում կը ծախվի աւելի աժան գնով, քան ինչպէս այժմս է։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Մարտի 11-ին, երեկոյեան ժամը 7-ին, «Մօսկօվսկի Նօմերա» հիւրանոցում բնակվող Սօֆիա Միկուլսկայան ընդունել է լեղապիսի խառնուրդ։ Միկուլսկայային տարել են Միքայէլեան հիւանդանոց, ուր բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ ուշքի է եկել։ Ինքնասպանութիւն գործելու պատճառները առայժմս չեն պարզված։

◆ Մարտի լոյս 11-ի գիշերը Նիկ. Յովհաննիսեանի խոհանոցից (Միքայէլեան փողոց № 158) անյայտ չարագործներ գողացել են սպիտակեղէն և ինքնաեռ, ընդամենը 300 րուբլի արժողութեամբ։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կիրակի, մարտի 9-ին, կայացաւ Բագուի ռէալական դպրոցի մանկավարժական խորհրդի արտակարգ նիստը՝ փակված 6-րդ և 7-րդ դասարանների աշակերտների քննութեան ժամանակը որոշելու համար։ Խորհուրդը որոշեց մայիսի 1-ին արձակել յիշեալ դասարանների աշակերտներին պատրաստվելու համար, իսկ մայիսի 7-ին ձեռնարկել քննութեան և վերջացնել յունիսի 14-ին։

◆ Միւս քաղաքների օրինակով, Բագւում կազմակերպվում է միացեալ խորհուրդ ծնողական ժողովների և տեղական բոլոր միջնակարգ դպրոցների մանկավարժական խորհուրդների ներկայացուցիչներից։ Իւրաքանչիւր դպրոց խորհրդում ունենալու է հինգ ներկայացուցիչ՝ երեք հոգի ծնողական ժողովի անդամներից և երկուսը՝ մանկավարժներից։ Միացեալ խորհրդի առաջին նիստը տեղի կունենայ մարտի 20-ին։

◆ Բագուի քաղաքապետի կարգադրութեամբ փակվեց «Նեկտար» ֆիրմայի լիմօնադի գործարանը։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Մօզդոկ, 25 փետրվարի

«Մշակի» № 37-ում արձանագրել էր, որ Մօզդոկի՝ միջոցների մէջ խտրութիւն չը դնող հոգաբարձուները ներկայ ուսումնական տարվայ կիսին արձակել են առերևս գրողին և պ. Յակոբ Գենջեանցին դպրոցներից՝ զրկելով մեզ արձակման օրից տարեկան ռոճկից։

Բացի դրանից՝ մատնանիշ էի արել, որ շուտով կարձակեն և երրորդ ուսուցչին, որի նկատմամբ բոլորովին սխալված չեմ եղել... Գուշակութիւնս արդէն կատարված է։

Ամսիս 23-ին, շաբաթ օրը, Մօզդոկի հայոց դպրոցների վարիչները գաղտնի քուէարկութեամբ ու ձայների առաւելութեամբ արձակեցին ուսուցիչ և խմբապետ պ. Արշակ Տէր-Յովսէփեանցին՝ լոկ այն պատճառով, որ վերջինս յանդգնել է «Մըշակի» մէջ մերկացնել հոգաբարձութեան արարքը։ Ուրեմն, թղթակցութեան համար կարելի է ուսուցիչ արձակել ու զրկել ամբողջ տարվայ ռոճկից...

Մեզ՝ երեք ուսուցիչներիս Մօզդոկի հայոց դպրոցների խնամակալները արձակել են միայն և միմիայն նրա համար, որ մենք բաց ճակատով թէ մանկավարժական, թէ ծխական և թէ խառն ժողովներում մտրակել ենք այն բոլորը՝ ինչ որ դպրոցին ու հասարակութեանը կարող էր վնաս բերել։

Մենք պաշտպանել ենք դպրոցի և ժողովրդի շահերը։ Մեր այդ արարքին չը կարողացան հանդուրժել հոգաբարձութիւնը և տեսուչը։ Եւ դրա հետևանքն այն եղաւ, որ նրանք գիշեր-ցերեկ պատրուակներ էին որոնում, որպէսզի կարողանան մի կերպ հեռացնել մեզ մեր պաշտօններից։ Մեզ հեռացրին լոկ նրա համար, որ տարբեր էին մեր հայեացքները, տարբեր մեր գործելակերպը՝ քան դպրոցների վարիչներինը։

Շուտով արձակված երեք ուսուցիչներս հասարակութեան դատաստանին կը յանձնենք մեզ արձակելու ամփոփ պատմութիւնը, որով պարզ ցոյց կը տանք Մօզդոկի հայոց դպրոցի վարչութեան իսկական ֆիզիօնօմիան։

Գարեգին քահ. Ասրեան

—

Բագու, 8 մարտի

Ձեր թերթի № 51-ում «Բագուի լուրեր» բաժնի մէջ արտատպված «Баку» թերթի 16-րդ համարից տեղեկութիւնը՝ Նուխու ժողովի մասին սխալ լինելու պատճառով, բարի եղէք տեղ տալ երկտողիս։

Տեղեկութեան մէջ ասված է, որ ես իմ ճառիս մէջ ծանօթացնելով սիֆիլիսի նշանակութեան և ընթացքի մասին, կանգ առնելով սիֆ. ծագման պատճառների վրա, ասել եմ, «որ սիֆիլիսի բունը ծառայում է հրէական Վարդաշէն գիւղը, որտեղից տարածվել է այդ հիւանդութիւնը և այլն»։ Չը գիտեմ ինչից դրդված «Баку» լրագրին տեղեկութիւն տուող անձնաւորութիւնը ինձ վերագրել է այնպիսի մտքեր, որոնց ես չեմ արտայայտել։ Պարզելով սիֆիլիսի էութեան մասին և առհասարակ նրա զարգացման էտապների մասին՝ ես կանգ առայ պատճառների վրա, ասելով որ այդ ախտը այնքան հին է, որքան ինքը մարդկութիւնը, սակայն այդ ախտը աջող զարգացում ստացաւ հին և միջին դարերում, իսկ ներկայ սօցիալ-տնտեսական պայմանները հասցրին նրան իր ապօգէին. կարելի է ասել մինչև անգամ, որ վեներական ախտերը զարգանում են զուգընթացաբար կապիտալիստական քաղաքակրթութեան հետ։ Վեներական հիւանդութիւնը իր ապրուստի կենտրօն ընդունելով մեծ քաղաքները՝ կամաց-կամաց մուտք է գործում և գիւղերը։

Նախ և առաջ գիւղից քաղաք գաղթականութիւնը նպաստում է նրա տարածման, սակաւահողութիւնը, հարկերի ծանրութիւնը և տնտեսական տագնապները, վերջին ժամանակներս գիւղից անհագին կօնտիգենտ դուրս շպրտեց քաղաք, որպէսզի իրանց ապրուստը կարողանան հայթայթել։ Գիւղական տգիտութիւնը զարկ է տալիս նոյնպէս նրա զարգացման։ Ահա Նուխու գաւառում անհագին ծաւալ ստացած հիւանդութեան պատճառները։

Ասել և մեղքի ծանրութիւնը ձգել մի որևէ ազգութեան վրա, դա կը լինի աւելի քան անհիմն և ծիծաղելի, որովհետև թունաւոր սիֆիլիսը ազգութիւն, դասակարգ չէ ճանաչում։ Բնականաբար հրէական թաղը որպէս բուն և պատճառ միտք չը կայ գտնելու։

Հայրիկ Տէր-Պօղոսեանց

—

Դօրպատ, 2 մարտի

Ամենքին յայտնի է, թէ ո՜րպիսի մեծ նեցուկ է ուսանողական կեանքում դրամարկղը, որից ամեն մի նեղ րօպէում փոխարինաբար կամ որպէս նպաստ կարող է օգտվել չքաւոր ուսանողը։ Առաւել ևս մեծ է նրա նշանակութիւնը Դօրպատի նման փոքրիկ ու հեռաւոր քաղաքների սակաւաթիւ հայ ուսանողների համար, որոնք օժանդակութեան գրեթէ բոլոր աղբիւրներից զուրկ՝ մի կերպ պահում են իրանց գլուխները։ Այդ բանը քաջ յայտնի է նաև մեր աւագ ընկերներին՝ Դօրպատի համալսարանի նախկին ուսանողներին, որոնք այսօր ուսումն աւարտելուց և ապահով պաշտօնների տէր լինելուց յետոյ՝ զլանում են իրանց պարտքը վերադարձնել ուսանողական աղքատիկ դրամարկղին։

Դեռ ես անցեալ տարի նամակներով յիշեցրինք ընկերներին իրանց պարտքը, սակայն նրանցից մի քանիսը միայն արձագանք տուին մեր գրութեան, ուղարկելով իրանց վերցրած պարտքի մի աննշան մասը։ Մնացածները չուզեցան նոյնիսկ երկտողով պատասխանել մեր նամակներին։ Սրանով Դօրպատի հայ ուսանողական միութիւնը վերջին անգամ հրաւիրում է նրանց վերադարձնելու իրանց պարտքը. հակառակ դէպքում նա իրան վերապահում է իրաւունք ապագայում դիմելու աւելի սուր միջոցի՝ հրատարակելով պարտապանների անունները... Թող այնուհետև հասարակութիւնը ինքը լինի դատաւոր և ճանաչէ, թէ ում հետ գործ ունի։

Մեր հասցէն՝ Юрьевъ (Лиф) Прудовая, № 1. Студ.-медику Б. Багдасарянъ.

Ի դիմաց ուսանողութեան՝ գանձապահ
Բ. Բաղդասարեան

—

Բագու, 9 մարտի

Խնդրում եմ իմ ստորագրութիւնս նոյնպէս միացնեք գրականագէտների ժողովի բողոքին, որը յայտնված է «Մշակի» տաղանդաւոր աշխատակից Հայկակի սպանութեան առիթով։

Բժ. Գ. Սարգսեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

—

◆ Արփիարը սպանողին բուն անունը Պետրոս Հիւսնեան չէ, այլ արաբկիրցի Մարտիրոս Հայգործեան (Էքմէքճեան)։ Այս անձն է եղեր կրկին Վէնէտիկի մէջ Արփիարը սպաննել փորձողը։ Հանգուցեալը վերջերս ըսած է եղեր իր մտերիմներուն, թէ իր նոյն տէրօրիստը Կահիրէ եկած է՝ հաւանականօրէն զինքը սպաննելու պաշտօնով։

Քննութիւնները խստիւ կը շարունակուին և քանի մը անձերու վրայ կը ծանրանայ եղեր կարևոր կասկածներ իբրև դրդիչ կամ մեղսակից։

Կառավարութիւնը հարկ տեսած է խիստ միջոցներու դիմել հայերու նկատմամբ։

◆ Արփիարեանի սպանման առթիւ Կահիրէի մէջ միթինգ մը կատարուեցաւ ընդ նախագահութեամբ առաջնորդ հօր։ Հոն ատենախօսած են դոկտ. Տաղաւարեան, Տամատեան և ուրիշներ։ Որոշում տըրուած է՝

1) Յուշարձան մը կանգնել ի յիշատակ ողբացեալ Արփիարին.

2) Արտաքսել տալ ոճրագործ խմբակին պատկանողները։

◆ Աղեքսանդրիոյ դատարանը ամբաստանագիր մը հրատարակած է Լեւոն Լաբենցի դէմ, որ դեկտ. 2-ին Աղէքսանդրիա բնակող վաճառական Գրիգոր և Կարապետ Մելքոնեաններուն դիմելով, մահուան սպառնալիքի տակ, 2000 ոսկի պահանջած է։ Այս արարքը ըստ պատժական օրինագրքի 144-րդ յօդուածին՝ մահուան պատժոյ արժանի ըլլալով, ընդհանուր դատախազը զանի ամբաստանեալ ատեանին ամբաստանած է։ Այս ալ ամբաստանութիւնը հաստատելով ոճրագատ դատարանին ղրկած է։ Յայտնի է, թէ Լեոն Լաբենց արդէն Եգիպտոսէն փախած է։

◆ Պատրիարք Օրմանեանը պաշտօնապէս ծանոյց Կ. Պօլսոյ Մայր եկեղեցւոյ Թաղ. խորհուրդին, թէ ողբացեալ Թավշանճեանի ընտանիքը և Աթանագինէ Էգնաեան խոստացած են իրենց անձնականէն 7 հազար ոսկի ծախսելով Մայր վարժարանը վերստին կառուցանել, գիտական արդի պայմաններով և սրբատաշ քարերով։

◆ Ամերիկայէ կիմացնեն, թէ երբեմնի Մաշտոց վարդապետ, որ իր եղբօր կինը առած Ամերիկա տարած էր, ամուսնացեր է նոյն կնոջ հետ։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ղօչան, 4 մարտի

Պարսկաստանում անջումանականները յետ են նահանջում կամաց-կամաց, էլի տեղի տալով հին կարգերին։ Կարելի է ասել, որ անջումանը իր նշանակութիւնը կորցրել է ժողովրդի աչքում և ժողովուրդը մի տեսակ թերահաւատ է դէպի նրա խոստացած բարեփոխութիւնները։ Անջումանի նըշանակութիւնը ընկնելու մէջ մեծ դեր են խաղում թիւրքական ոտնձգութիւնները։

Դեռ նոր արթնացած պարսիկ ժողովրդին պէտք են շատ ու շատ բաներ։ Կրթութիւն, լուսաւոր և առաջադէմ մտքեր, ղեկավարող գլուխներ, վարիչ առաջնորդներ, օրինագէտներ, երկիրը ուսումնասիրած դիւանագէտներ և այլն... Բայց ունի՞ արդեօք Պարսկաստանն այդպիսի ուժեր. դժբաղդաբար պէտք է պատասխանենք՝ որ ոչ։

Ուրեմն, Պարսկաստանը դեռ իր էվօլիւցիայի առաջին շրջանումն է գտնվում։ Հարկաւոր է ժողովրդին կրթել, պատրաստել և նրա համար սահմանադրութիւնը մարսելի դարձնել, այնպէս որ ժողովուրդը ինքը զգար կռւով ձեռք բերելու իրան համար նուիրական ազատութիւնը։ Քանի դեռ ժողովուրդը խոր տգիտութեան մէջ է խարխափում ու մեծամասնութիւնը չէ հասկանում, թէ ինչ ասել է սահմանադրութիւն, կամ ինչպէս նա կարող է ժողովրդին օգտակար լինել, ի հարկէ, այդպէս էլ պէտք էր սպասել, որ ժողովուրդը կը ձանձրանայ իր անիմաստ դրութիւնից և էլի կը ձգտի հին կարգերին։

Պարսիկ ինտելիգենտների առաջին հոգսը պէտք է լինի ժողովրդին կրթելը ու նրան զարգացման բարձր աստիճանի վրա դնելը. այն ժամանակ միայն նա կարող է իր իրաւունքները պաշտպանել, և թէ մէջլիսը, թէ հասարակական այլ ձեռնարկութիւններ կը ծառայեն իրանց իսկական նպատակին։

Ս. Գրիգորեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նոր անկարգութիւններ Բոսնիայում.— Այս օրերս, որպէս հաղորդում է «Times» լրագրի Բուդապէշտի թղթակիցը, համայնական խորհրդի ընտրութիւնները կատարելու ժամանակ Գեչկի գիւղում տեղի ունեցաւ մի տեսարան, որից երևում է, որ դեռ ևս հանգիստ տրամադրութիւն չունի։ Անկարգութիւններին առիթ տուեց այն հանգամանքը, որ իշխանութեան ներկայացուցիչները դիտաւորութիւն ունէին դադարեցնել ընտրութիւնները նրա համար, որ գիւղացիները, ազատամիտների առաջարկած թեկնածուների անժողովրդական լինելու պատճառով, սկսեցին ընտրութիւններ կատարել դիմադրական կուսակցութեան ցուցակով։

Նրանց և հակառակորդների միջև, որոնք յարձակողական դիրք բռնեցին դէպի պաշտօնեաները, կռիւ սկսվեց, որին միջամտեցին ժանդարմները։ Սկսվեց հրացանաձգութիւն թէ մէկ և թէ միւս կողմից, որի ժամանակ սպանվեցին մի քանի հոգի և վիրաւորվեցին շատերը։ Այն ժամանակ կատաղած գիւղացիները դիմեցին մերձակայ քաղաքը և կատարելապէս քարուքանդ արեցին քաղաքային տունը։ Ապստամբութեան տեղը կանչված են զօրքեր։ Ի լրումն այդ տեղեկութեան, «Berl. Tageblatt» թերթի Չէրնովիցի թղթակիցը հաղորդում է, որ գիւղացիական անկարգութիւններ են սկսվել Բոտուշանի շրջանում, ուր շտապով կանչված են զօրքեր։

Անգլիական համայնքների ժողովում.—Համայնքների ժողովը հաստատեց ծովային բիւջէտը։ Նաւատորմղի ծառայողների թիւը որոշված է 128,000 մարդ։

Նորվեգիական կաբինետի հրաժարականը.—Քրիստիանիայից հաղորդում են, որ ստորթինգը, գահական ճառի մասին վիճաբանութիւնները աւարտելուց յետոյ, 70 ձայնի մեծամասնութեամբ 58-ի դէմ, մերժեց ձախակողմեանների կողմից առաջարկված հերթական հարցերին անցնելու բանաձևը, անվստահութիւն յայտնելով կառավարութեանը, և ապա 113 ձայնի մեծամասնութեամբ 10-ի դէմ մերժվեց սօցիալ-դեմօկրատների առաջարկած նոյնպիսի բանաձևը։ Ի նկատի ունենալով, որ երկու բանաձևերի քուէարկութեան ժամանակ երևաց ստորթինգի հակակառավարչական մեծամասնութիւն, կաբինետը հրաժարական է տալիս։

Մինիստրների խորհրդինիստի միջոցին, որ կայացաւ պալատում, կաբինետը ներկայացրեց իր հրաժարականը, որը և ընդունվեց թագաւորի կողմից։ Միևնոյն ժամանակ թագաւորը խնդրեց մինիստրներին ժամանակաւորապէս մնալ իրանց պաշտօններում։ Մինիստրների հրաժարականը պատճառաբանվում է ստորթինգի քուէարկութեամբ։ Մինիստրութիւնը խորհուրդ էր տալիս թագաւորին՝ առաջարկել նոր մինիստրութեան կազմակերպութիւնը ստորթինգի նախագահ Գուննարկնուդսէնին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

12 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բարձրագոյն հաստատութիւն գտաւ զինւորական-ծովային դատարանի յատուկ ատեանի վճիռը, որի համաձայն կայսերական «Շտանդարտ» զբօսանաւի ծովային արկածի գործում փոխ-ծովակալ Նիլօվ, 1-ին կարգի կապիտան Չագին, փոխ-գնդապետ Կօնիւշկօվ և լէյտենանտ Սալթանօվ արդար են ճանաչվում։

ՏԱՇԿԵՆՏ։ Քաղաքի բնիկների թաղում տաս զինված պարսիկներ յարձակվեցին մի հարուստ բրնձավաճառի տան վրա։ Սպանված են տանտէրը և աւազակներից մէկը։

ՐԱԴՕՄ։ Կամէնկա արուարձանում մի գիւղացու տան սրահում ոստիկանութիւնը գտաւ հազարից աւելի փամփուշտ, զանազան գործիքներ և օֆիցէրի զգեստ։

Արտաքին

ԼՕՆԴՕՆ։ Կաննայից լրագիրները տեղեկութիւններ են ստացել, որ այնտեղ վախճանվել է Դէվօնշիրի դուքսը։

ԲԵՐԼԻՆ։ Վօլֆին հեռագրում են Վաշինգտոնից. «Տեղական չինական դեսպանը յայտնեց արտաքին գործերի մինիստրին, որ նա պաշտօնական տեղեկութիւն է ստացել, որ Նանկինի փոխարքային յանձնարարված է ողջունել ամերիկական նաւատորմղին չինական ջրերում։ Վաշինգտոնում դա բացատրում են նրանով, որ Չինաստանը հրաւիրում է նաւատորմղին»։

Գերմանական արքայական զոյգը Աւգուստ-Վիլհելմ պրինցի և Վիկտորիա-Լուիզա պրինցուհու հետ մեկնեց Վենետիկ։

Ռէյխստագում իշխան Բիւլօվը ճառ արտասանեց, սկսելով նրանից, որ հոկտեմբերին Բեռլինում գումարվելու է միջպարլամենտական միութիւն։ Ասաց, որ նա յօժարակամ կը մասնակցէ ի թիւս այն անձերի, որոնք ցանկանում են նպաստել ժողովուրդների միութեան։

Անցնելով Մարօկկօյին, «բոլորովին ճիշտ է,—ասաց Բիւլօվը,—որ մենք պէտք է հետևենք, որպէսզի տնտեսական հաւասարակշռութիւնը չը խախտվի, որպէսզի մրցման ազատութեան չը տրվեն մեր տնտեսական շահերը Մարօկկօյում. սակայն պէտք է ընդունել, որ Ալժէզիրասի արձանագրութիւնների կարևոր որոշումների գործադրութիւնը արգելքի է հանդիպած Մարօկկօյի անկարգութիւնների պատճառով, որոնք գլխաւորապէս ծագել են գահաժառանգութեան վէճերից։ Ֆրանսիական կառավարութիւնը չի կարող մեզ կշտամբել այն բանում, որ մենք արձանագրութիւնները մեկնաբանում ենք անսխալ և սառը, հաշւի չառնելով ցոյց տրված հանգամանքները։ Մեր կողմից մենք սպասում ենք, որ Ֆրանսիան էլ խաղաղասիրութեամբ և բարեացակամօրէն ընդունէ և գործադրէ Ալժէզիրասի արձանագրութիւնները»։

Կանգ առնելով մակեդօնական հարցի վրա, կանցլէրը ասաց, որ չարիքի արմատը կայանում է ոչ թէ բացառապէս կամ անգամ գլխաւորապէս քրիստոնեաների և մահմէդականների շահերի հակասութեան մէջ, այլ քրիստոնեայ զանազան ազգութիւնների կատաղի կռւում, ազգութիւններ, որոնցից իւրաքանչիւրը ջանում է գերակշռող դիրք ձեռք բերել Մակեդօնիայում և ապահովել իր համար աւելի մեծ հող այն դէպքում, երբ Բ. Դրան գերիշխանութիւնը մէջտեղից կը բարձվի։

Այդ ցաւալի դրութեան իբրև ներհակ հանդիսանում է status quo-ի պահպանութեան սկզբունքը։ Գերմանիան շահագրգռված է նրանով, յամենայն դէպս նոյնօրինակ շահախնդրութեամբ, ինչպէս միւս մեծ պետութիւններից իւրաքանչիւրը։ Status quo-ի պահպանութեան սկզբունքից հետևում է այն, որ Գերմանիայի ձգտումները պէտք է ուղղված լինեն ինքնին՝ մի կողմից պետութիւնների համերաշխութիւնը պահպանելու, միւս կողմից աջողեցնելու, որ Բ. Դուռը կատարէ նրանց պահանջները։

Վտանգաւոր են և միանգամայն նպատակին չեն հասնի այն առաջարկութիւնները, որոնք շօշափում են սուլթանի գերիշխանութիւնը, որովհետև նրանք կարող են ծայրայեղ դիմադրութիւն առաջ բերել մահմեդական ազգաբնակութեան կողմից և պատճառ կը դառնան երկպառակութիւնների պետութիւնների միջև, որոնք վէճերով ալեկոծված վիլայէթների պատճառով կարող են մինչև անգամ պատերազմի շեփոր հնչեցնել... Նա կարծում է, որ բոլոր կաբինէտները միևնոյն հայեացքի են, ուստի և յոյս ունի, որ եւրոպական համերգը կը պահպանվի։

Լօրդ Տվիդմուտին ուղղված Վիլհէլմ կայսերի նամակի առիթով կանցլէրը դրականապէս հերքեց այն յամառ կարծիքը, որ նամակը նոյնն է թէ միջամտել Անգլիայի ներքին գործերին։ Պետական պաշտպանութեան հարցում ոչ մի ժողովուրդ թոյլ չի տայ օտարին միջամտել իր ներքին գործերում. իւրաքանչիւրը ղեկավարվում է միայն սեփական ապահովութեան, սեփական կարիքի մտորումներով։ Այդ իրաւունքով օգտվում է և Գերմանիան, երբ նաւատորմիղ է կառուցանում իր ափերը և իր առևտուրը պաշտպանելու համար։

Մենք կամենում ենք ապրել խաղաղութեամբ և համերաշխ Անգլիայի հետ և չենք հերքում նրա իրաւունքները այնպիսի նաւատորմիղ կառուցանելու, ինչպիսին նա հարկաւոր է համարում բրիտանական հզօրութիւնը պահպանելու համար. բայց մենք չենք ցանկանում, որ Գերմանիայի ձեռքով կատարվող նաւերի կառուցումը մարտահրաւէր համարվէր Անգլիայի վերաբերութեամբ։

Վերջացնելով իր ճառը, Բիւլօվը ասաց, որ այն բարեկիրթ տոնը, որով քննվեց այդ հարցը պարլամենտում, ամենից լաւ խափանում է Անգլիայի և Գերմանիայի բարեկամական յարաբերութիւնների իւրաքանչիւր խախտում և թուլացնում է այդ միջնադէպի առիթով ծնունդ առած բանակռւի սրութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Րէյտէրի գործակալութեան Սան-Ֆրանցիսկօից հեռագրում են, որ Կօրէայի պետական խորհրդի խորհրդատու ամերիկացի Ստիվէնսը ենթարկվել է կօրէացիների յարձակման, որոնք կրակել են նրա վրա։ Վիրաւորվելով նրանցից, Ստիվէնսին վերջ ի վերջոյ աջողվում է սպանել յարձակվողներից մէկին։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

Թիֆլիսից Բագու		Բագուից Թիֆլիս	
Արագ. գիշ.	12 ժ. 28 ր.	Արագ. երեկ.	5 ժ. 02 ր.
Պոստ. երեկ.	9 ժ. 41 ր.	Պոստ. գիշ.	12 ժ. 21 ր.
Մարդ. առաւ.	7 ժ. 53 ր.	Մարդ. առաւ.	4 ժ. 58 ր.
Թիֆլիսից Բաթում		**Բաթումից Թիֆլիս**	
Մարդ. առաւ.	10 ժ. 58 ր.	Մարդ. առաւ.	10 ժ. 38 ր.
Պոստ. առաւ.	9 ժ. 15 ր.	Պոստ. առաւ.	6 ժ. 49 ր.
Մարդ. երեկ.	11 ժ. 22 ր.	Մարդ. երեկ.	5 ժ. 46 ր.
Թիֆլիսից Երևան		**Երևանից Թիֆլիս**	
Պոստ. գիշ.	1 ժ. 8 ր.	Պոստ. ցերեկ.	1 ժ. 18 ր.
Մ.-ապր. ցեր.	3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ա.գ.	12 ժ. 52 ր.
Կարսից. Ալեքսան.		**Ալեքսանդր. Կարս**	
Պոստ. երեկ.	5 ժ. 48 ր.	Պոստ. ցերեկ.	12 ժ. 23 ր.
*)Մ.-ապր. առ.	5 ժ. 25 ր.	*)Մ.-ապր. գիշ.	3 ժ. 09 ր.
Թիֆլիսից Ջուլֆա		**Ջուլֆայից Թիֆլիս**	
Պոստ. գիշ.	1 ժ. 08 ր.	Պոստ. գիշ.	6 ժ. 48 ր.
Մ.-ապր. ցեր.	3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ցեր.	6 ժ. 54 ր.

*) Այս գնացքները երթևեկում են միայն պէտք եղած ժամանակ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԲԺԻՇԿՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։

Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9^{1}/_{2}$—2 ժ. ատամի հիւ.

Չ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։

Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^{1}/_{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։

Կին-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^{1}/_{2}$—2 ժ. մանկաբարձութեան։

Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Հայոց ներկայացում
Հինգշաբթի, մարտի 13-ին
ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Յօգուտ
հանգուցեալ դերասան. Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ընտանիքի
Առաջին անգամ
Պարոն կառավարիչ
Կօմ. 3 գործ. Բիսսօնի, թարգմ. Ա. Վրոյրի
Մասնակցում են տ. տ. Մայսուրեան, Մելիքեան, Նօնիկեան, Յասմիկ, պ. պ. Տէր-Դաւթեան, Վանչիր, Վրոյր, Մամիկոնեան, Ռշտունի և ուրիշները։
Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում
Սկիզբը ժամը 8 ին երեկոյեան
Հայոց Դրամատ. Ընկ.—եան Վարչութ.
(չ. հ.) 2—2

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԻՑ

Այսօր Արքունական թատրոնում Պետրոսեանի որբերի օգտին ներկայացման այցելուները թող պահեն իրանց տոմսակները որովհետև այդ տոմսակի տէրերը կունենան 50% արտօնութիւն պ. Գ. Բաշինջաղեանի հիասքանչ «Սևանայ լճի ափին» պատկերի վիճակահանութեան ժամանակ։

Մանրամասնութիւնները «Մշակի» վաղվայ № ում. իսկ այսօր ամենքից էլ աճապարեցէք այդ ներկայացման։

Թիֆլիսի Ժողովարան
Հինգշաբթի, մարտի 13-ին
ընտանեկան երեկոյթ
Ռուս-մալօրօսիական դրամատիկական և օպերէտային արտիստների ընկերութիւնը պ. պ. անդամների, կանդիդատների, նրանց ընտանիքների և հիւրերի համար
կը ներկայացնէ
→ ՄԿՐՏՎԱԾ ՀՐԷՈՒՀԻ ←
4 գործ. պիէսա երգեցողութեամբ և պարերով։
Մասնակցում է ամբողջ խումբը
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

Մարտի 16 կիրակի օրից
ԲԱՑ Է
Նկարիչ ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ՋՈՒՏ
ԱԿՎԱՐԵԼՆԵՐԻ
Ցուցահանդէսը
Կովկասեան գիւղատնտեսական կայսերական ընկերութեան դահլիճներում.
Բարիատինսկայա փողոց.
Ցուցահանդէսը բաց է ամէն օր առաւօտեան ժամը 10-ից մինչև երեկոյեան ժամը 5-ը։
Մուտքը արժէ 30 կոպէկ։
Աշակերտները և զինւորները վճարում են կէսը։
(օ. մ.) 20—1

Լոյս տեսաւ
«ԿԵԱՆՔ»-ի գրադարանից
ԿԱՐԼ ԿԱՈՒՑԿՈՒ
Ռէֆերատը
ԿԱՐԼ ՄԱՐՔՍԻ
Մասին
(հայերէն թարգմ. Եսայեանի, Մարքսի մահուան 25-ամեակի առիթով)
Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ առաջաբանով և ՄԱՐՔՍԻ նկարով
ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.
Դիմել՝ գրավաճառներին «Գուտենբերգ» և «ՓԱՐՈՍ»
(օ. մ.) 3—2

ԲԺԻՇԿ
Մելիք-Էլճարեան
Վեներական, միզասեռական և մորթու հիւանդութիւններ
Ընդունելութիւն 9—10 առաւօտ. 5—7 երեկ.
Կանիեւսկայա փող. № 6, Վեացէլ հիւրանոցի մօտ։
(հ. հ. շ.) 30—28

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց
Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—11

Փորձված սերմեր
ՍԵՐՄԵՐ
ցանելու համար
ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ
ԾԱՂԿԱՅԻՆ
ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
Պրէյսկուրանտը ուղարկվում է ձրի
Кавказское Т-во Сѣмянного Хозяйства Квеесъ и К-о
Тифлисъ, Михайловск. пр. № 55.
25—5

Լոյս տեսաւ
ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՑ ՄԱՏԵՆԱԳԻՐ
Գինը ճանապարհածախսով 40 կոպէկ
Գումարով գնողներին 30% զեղչում
Դիմել Թիֆլիս՝ Գուտտենբերգ գրավաճառանոցը և հեղինակին՝ Էջմիածին—Епископу Бардугимеосу Геворгіанъ. 5—5

Ծախվում է
—●● ՇԱՀԱՒԷՏ ԵՒ ԼԱՒ ԴՐՎԱԾ ԳՈՐԾ ●●—
(ՖԻՐՄԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ 1869 ԹՒԻՑ)
ԻՎԱՆ ԱՍԼ. ԿՈՒԿՈՒՋԱՆՕՎԻ
Թելի և գալանտերէյնի ապրանքի, գումարով և մաս-մաս վաճառք, Տեօմնի ռեադում։ Նոյն տեղը ծախվում են բոլոր ապրանքները էժան գներով։
Տեղեկանալ՝ Вельяминовская, 10, երեկոյեան 7—8 ժամը։
(կ. հ. կ.) 3—2

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։
ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կլէյմօն ունի իր վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԵՆՏՈՒՄ

ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ"
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ.
ԱՅՍՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռեզին. մանուֆակտուրային ընկերութեան
Սրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ. (հ. կ.) 100—10

Типографія „Экономія" Авака Мугдусіакопова съ С-ми. — Большая Ванкская т. д. Семинаріи № 3.